

**ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2014

**ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ  
ՈՒՍՈՒՄՆՍԱԻՐՈՒԹՅՈՒՆ**

|    |   |    |
|----|---|----|
|    | Կոոպերատիվների անհրաժեշտությունը  | և  |
|    | կարևորությունը.....   | 3  |
| ա. | Հայաստանի Հանրապետությունում գործող կոոպերատիվների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը (օրենք, կառավարության որոշում, նորմատիվային ակտ և այլն).....   | 18 |
|    | Հայաստանի Հանրապետությունում գործող կոոպերատիվների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը.....   | 43 |
| բ. | Շեշտը դնելով գյուղատնտեսական կոոպերատիվներին առնչվող իրավական ակտերի վրա դրանց ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն.....  | 45 |
| գ. | Ներկայումս ՀՀ կառավարությունում կոոպերատիվների վերաբերյալ շրջանառվող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրությունը և վերլուծությունը (շեշտը դնելով գյուղատնտեսական կոոպերատիվների վրա): Տվյալ նախագծերի ընդունումից (հաստատումից) հետո ակնկալվող արդյունքները ..... | 53 |

**ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ  
ՈՒՍՈՒՄՆՍԱԻՐՈՒԹՅՈՒՆ**

**Կոոպերատիվների անհրաժեշտությունը և կարևորությունը**

Կոոպերատիվները գոյություն ունեն շուրջ երկու հարյուր տարի: Գործելով տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, կոոպերատիվները ավելի երկարակյաց են, քան՝ ներդրողամետ ընկերությունները: Կոոպերատիվ մոդելը մշտապես հարմարվել է փոփոխվող պայմաններին, և տնտեսական ու սոցիալական նորանոր խնդիրներին լուծում տալու համար առաջացել են կոոպերացիայի նորարարական ձևեր:

Կոոպերատիվները զարգացել են մեծապես տարբերվող քաղաքական պայմաններ, տնտեսական զարգացման աստիճան, մշակութային բնութագրեր և պատմական հենք ունեցող երկրներում: Կոնկրետ երկրներում որոշակի տեսակի կոոպերատիվներ նկատելի աճ են գրանցել: Տասնիններորդ դարի վերջին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում կոոպերատիվները կարևոր դեր էին խաղում՝ որպես տնտեսական և սոցիալական հաստատություններ: Սեփական ուժերով արդյունքի հասնելու նախաձեռնությունների հետաքրքիր օրինակներ կային Չեխիայում, Բուլղարիայում, Սերբիայում և Լեհաստանում. նախքան սոցիալիզմի մուտք գործելը այդ երկրներ: Նույն կերպ, կոոպերատիվները առանցքային դերակատարություն են ունեցել զարգացող երկրներում, թեկուզև դրանք հաճախ հաստատակարգված և նույնիսկ օրենքով կարգավորված չէին:

Կոոպերատիվների հաջողության և երկարակեցության հիմնական պատճառն այն է, որ դրանք շահագրգռված են ոչ թե առավելագույնի հասցնելու ներդրողների շահույթը, այլ՝ բավարարելու համայնքի կարիքները: Կոոպերատիվներին պետք է վերաբերվել որպես հիմնախնդիրների համատեղ (կոլեկտիվ) լուծողների: Կոոպերատիվների համաշխարհային պատմությունը օգտակար դասեր է տալիս դրանց

հիմնավորումը հասկանալու համար: Կոոպերատիվները կարողացել են բարգավաճել նաև այն պատճառով, որ դրանք ունեն բնորոշ առավելություններ՝ համեմատած ներդրողամետ կազմակերպությունների հետ, այն իմաստով, որ ստանձնում են այնպիսի դերակատարություն, որ ներդրողամետ կազմակերպություններն անկարող են կամ չեն կամենում իրականացնել:

Միջնորդավճարները և մանրածախ գները նվազեցնելու համար ստեղծվել են օգտագործողների և սպառողների կոոպերատիվներ, արտադրողների շուկայական թույլ ներուժը հզորացնելու համար՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ, իրենց բիզնեսը ինքնակառավարելու համար՝ աշխատավորների կոոպերատիվներ: Ընդհանուր ապահովագրություն և օժանդակություն տրամադրելու համար աշխատողները և համայնքները հիմնել են փոխօգնության ընկերություններ: Իրենց անդամների կարիքները բավարարելով՝ կոոպերատիվները նպաստել են հասարակության լայն և հաճախ խոցելի հատվածների կյանքի որակի բարելավմանը: Հանրային բարեկեցության բազմաթիվ նախագծեր են կյանքի կոչվել շնորհիվ կոոպերատիվների կողմից արված գյուտերի և փորձարարական աշխատանքների: Բարեկեցություն ապահովող հիմնական հաստատությունները ի սկզբանե զարգացել են փոխադարձ օգնության և կոոպերատիվ խմբերի միջոցով:

Պատմական վկայությունները ցույց են տալիս, որ կոոպերատիվները ոչ միայն ճգնաժամերի ժամանակ ավելի լավ են գոյատևում, քան կազմակերպությունների այլ տեսակները, այլև առավել հաջողությամբ են դիմակայում ճգնաժամերի ազդեցությանը: Տասնիններորդ դարի բրիտանական սպառողական կոոպերատիվների պատմությունը ինքնահարատ գարգացման պատմություն է, որի վրա պարբերական անկումները միայն աննշան ազդեցություն են գործել: 1930-ականների մեծ դեպրեսիայի ժամանակ էլեկտրաէներգիայի և հեռահաղորդակցության ոլորտի կոոպերատիվները օգնեցին վերափոխելու ԱՄՆ-ի գյուղատնտեսությունը: 1960-ականներին կոոպերատիվ շարժում սկսվեց Նյու Յորքում, որում ներգրավվեցին 27000 ընտանիքներ: Իսկ 1970-ականների արմատական վերակառուցման ժամանակ Եվրոպայում ավելացավ աշխատավորական կոոպերատիվների թիվը, ընդ որում այդ կոոպերատիվների

շրջանում ձախողումների թիվն ավելի ցածր էր, քան՝ շահույթ հետապնդող ընկերությունների շրջանում: 2008-2009թթ. ճգնաժամը ևս մեկ անգամ վկայում է կոոպերատիվների ուժի և ճկունության մասին:

Կոոպերատիվ շարժման մասշտաբները գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել կոոպերատիվ հատվածի ընդհանուր չափի իրատեսական գնահատում:

Աշխարհի մասշտաբով երեք անգամ ավելի մեծ թվով կոոպերատիվների անդամ սեփականատերեր կան, քան՝ բաժնետիրական ընկերությունների անհատ բաժնետերեր, իսկ արագ զարգացող երկրներում (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան) կոոպերատիվի անդամների թիվը չորս անգամ է գերազանցում բաժնետերերի թվին: Կոոպերատիվների ընդհանուր անդամակցությունը կազմում է 800 մլն-ից մինչև 1 մլրդ մարդ: Ըստ Կոոպերատիվների միջազգային այլանսի, կոոպերատիվներ են գործում բոլոր երկրներում, ընդ որում դրանց կարևորությունը հատկապես մեծ է աղքատ համայնքներում:

Եվրոպական երկրներում գյուղատնտեսական կոոպերատիվների գումարային շուկայաբաժինը կազմում է մոտ 60 տոկոս գյուղատնտեսական մթերքների վերամշակման ու իրացման բնագավառում և մոտավորապես 50 տոկոս մասնաբաժին ներդրանքների մատակարարման բնագավառում: ԱՄՆ-ում կոոպերատիվների շուկայաբաժինը կազմում է գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման շուկայի մոտ 28 տոկոսը և ներդրանքների մատակարարման շուկայի 26 տոկոսը:

Ամբողջ աշխարհում գործում են մոտավորապես 53 հազ. վարկային կոոպերատիվներ և վարկային միություններ: Եվրոպայում կան մոտ 4200 վարկային կոոպերատիվ բանկեր՝ 63 հազ. մասնաճյուղերով:

Եվրոպական մանրածախ առևտրի հատվածում եղած 3200 սպառողական կոոպերատիվներում աշխատում է 400 հազ. մարդ և անդամակցում 29 մլն անդամ:

Ըստ Կոոպերատիվ և փոխադարձ ապահովագրության միջազգային դաշնության, 2008թ.-ին համաշխարհային ապահովագրական շուկայի 25 տոկոսը բաժին էր ընկնում կոոպերատիվներին:

Սոցիալական կոոպերատիվները, որոնք լայնորեն տարածված են հատկապես եվրոպական երկրներում և Կանադայում, կոոպերատիվի նոր ձև են, որը հստակ նպատակ է հետապնդում բարելավելու կոլեկտիվ օգուտները: Որպես տեսակ, սոցիալական կոոպերատիվը գտնվում է ավանդական կոոպերատիվի և շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպության միջև և, ընդհանուր առմամբ, համատեղում է բազմաթիվ շահագրգիռ կողմերի (կոոպերատիվի անդամների) ներգրավումը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նպատակների շուրջ:

**Կոոպերատիվը պետք է դիտել որպես մասնավոր ձեռնարկատիրության այնպիսի ձև, որը պատկանում է իր անդամներին, համատեղ վերահսկվում է նրանց կողմից և ծառայություններ է մատուցում նրանց համար:**

Կոոպերատիվի նպատակները հիմնականում **տնտեսական են:** Դյուրին գործ չէ կոոպերատիվի ստեղծումը և հաջող զարգացումը: Ընդհանուր առմամբ, ժամանակատար և բարդ գործընթաց է: Շուկայական պայմանները, կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև իրավական դաշտը պետք է նպաստեն կոոպերատիվների զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, կարևոր նախապայման են կառավարության հմտությունները և ունակություններ ունեցող ուժեղ առաջնորդների ընտրությունը և բավարար ֆինանսական ռեսուրսների առկայությունը:

Շուկայամետ բարեփոխումների, սեփականաշնորհման և ապակենտրոնացման ներկայիս միտումների ազդեցության ներքո կոոպերատիվը իրավացիորեն դիտվում է որպես գյուղացիների տնտեսական նախաձեռնությունները կյանքի կոչող, կայուն զարգացում և արդյունավետ կառավարում իրականացնելու ամենահարմար կազմակերպական ձևը:

Ասվածի լավագույն վկայությունն է բազմաթիվ պետությունների, դոնոր և հասարակական կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության զարգացման գործում կոոպերատիվների կարևորության շեշտադրումը: Այդուհանդերձ, պետությունը չպետք է միջամտի կոոպերատիվների ստեղծմանը և կառավարմանը: Կառավարության խնդիրը դրանց ստեղծմանն աջակցող, իրավական և տնտեսական բարենպաստ միջավայր ձևավորող գործառույթների իրականացումն է:

Ամենապարզ սահմանմամբ՝ կոոպերատիվը ապրանքներ և ծառայություններ արտադրելու և մատակարարելու նպատակով կամավոր սկզբունքով ստեղծված տնտեսական միավոր է, որի անդամներն իրականացնում են կառավարումը և համատեղ բաժանում առաջացած ռիսկերն ու շահույթը<sup>1</sup>:

Համաձայն Կոոպերատիվների Միջազգային Դաշնության (ստեղծվել է 1895թ. Լոնդոնում) ձևակերպման՝ «Կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերակցություն է, որոնք կամավոր կերպով միավորվում են՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար»<sup>2</sup>:

### **Հայաստանի Հանրապետությունում կոոպերատիվ շարժման ընդհանուր բնութագիրը և վիճակագրությունը**

Հայաստանի ագրոպարենային ոլորտի առջև ներկայումս ծառայած խնդիրների բնույթից ակնհայտ է, որ գյուղատնտեսության և ագրոգործարարության հաջող զարգացումը էապես պայմանավորված է կոոպերատիվների արմատավորմամբ և զարգացմամբ: Շուկայական հարաբերությունների պայմաններում կոոպերացիան կարող է համակարգել տարբեր գործառույթներ ինչպես գյուղմթերքի արտադրության, այնպես էլ սպասարկումների, իրացման և մատակարարման գործընթացում: Կոոպերացիայի գաղափարի իրականացումը պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում նշված այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչպիսիք են գյուղմթերքի իրացման դժվարությունները, սպասարկումների, ոլորտում օգտագործվող հիմնական ռեսուրսների տեխնիկայի, վառելանյութերի, պարարտանյութերի և այլնի ոչ մատչելիությունը:

Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ միջազգային և պետական ծրագրեր և միջոցառումներ ուղղված են եղել խթանելու կոոպերատիվների ձևավորումը և զարգացումը:

<sup>1</sup> Ուոուտյան Վ., Ավետիսյան Ս. Գյուղատնտեսական կոոպերատիվներ: Երևան: Ասողիկ, 2011թ., էջ

<sup>2</sup> [www.ica.coop](http://www.ica.coop)

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կտրուկ շարժումը նպաստակահարմար է ներկայացնել հետևյալ փուլերով:

**1993-1999թթ.:** 1993թ.-ից սկսած, առաջնորդվելով կամավորության և ինքնավարության սկզբունքներով, որոշ տեղական և տարածաշրջանային կազմակերպություններ, ասոցիացիաներ գրանցվեցին, որոնք սակայն, հետագայում չգործեցին:

1994թ. կազմակերպվեց <<Հայ ֆերմեր>> ասոցիացիան, որի կազմում ընդգրկվեցին հիմնականում գյուղացիական տնտեսություններ, և քանի որ այդ տնտեսությունները տարաբնույթ էին, այդ ասոցիացիան երկար չգործեց և դադարեցրեց իր գործունեությունը: 1995թ. ստեղծվեց <<Հայաստանի գյուղացիական միություն>> հասարակական կազմակերպությունը: 1998 թ.-ին ստեղծվեց <<Ֆերմերների ազգային միությունը>>: 2004 թ.-ին միությունը վերանվանվեց <<Ֆերմերների ազգային միավորումի>>: 90-ականների վերջերին կազմակերպվեցին մոտ 400 ոռոգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվներ, որոնք ոռոգման ջուր էին մատակարարում առանձին համայնքների գյուղացիական տնտեսություններին: Այս կազմակերպությունների մեծ մասը լուծարվեց 2002թ.-ին <<Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո, երբ տվյալ գործառույթը իրականացնելու համար ստեղծվեցին ջրօգտագործողների ընկերություններ: Ներկայումս Հայաստանում գործում են 44 ջրօգտագործողների ընկերություններ:

Այս փուլում ֆերմերների մտածելակերպի, կոոպերատիվների ինքնության և սկզբունքների մասին թյուր պատկերացումների, կոոպերատիվի կառավարմանը, ինչպես նաև տնտեսական գործունեությանը անդամների ընդհանրապես չմասնակցելու կամ պասիվ մասնակցության պատճառով այս կազմակերպությունների մեծ մասը փակվեց:

**2000-2010թթ.:** Երկրորդ փուլի առանձնահատկությունը այն է, որ Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ միջազգային զարգացման կազմակերպություններ սկսեցին իրենց ծրագրերը իրականացնել կոոպերատիվների հիմնադրմամբ կամ նրանց միջոցով: 2001թ.-ից ստեղծվեցին <<Գյուղատնտեսական ասոցիացիա>> սպառողական կոոպերատիվներ: 2001թ.-ից ԱՄՆ գյուղդեպարտամենտի մարքեթինգի



աջակցության ծրագրի (ԱՄՆ ԳԴ ՄԱԾ) ֆինանսատնտեսական օժանդակությամբ ստեղծվեցին 50 վարկային ակումբներ: Այս ակումբների մեծ մասը ներկայումս լուծարված են: <<Գյուղատնտեսական վարկային ակումբների>> մասին ՀՀ օրենքը գործում է մինչ օրս և համարվում է բավականին լավ մշակված, կոոպերատիվների ինքնությանը վերաբերող ցայտուն էլեմենտներ պարունակող օրենք:

ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի աջակցությամբ 2001թ.-ից ստեղծվեցին կաթի մարքեթինգային սպառողական կոոպերատիվներ: 2001թ.-ին ստեղծվեց <<Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա>> (ԳԱՖ) իրավաբանական անձանց միությունը՝ տեղական 8 ֆերմերային կազմակերպությունների նախաձեռնությամբ: Ներկայումս ասոցիացիայի կազմում ընդգրկված է 22 սպառողական կոոպերատիվներ ՀՀ 6 մարզերից: Բազմաթիվ դոնոր ծրագրերի շրջանակներում ԳԱՖ-ը իրականացրել է սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման ծրագրեր, ուսուցումներ, խորհրդատվություն, քարոզչություն և այլն:

2007թ.-ի փետրվարի 21-ին, ԱՄՆ ԳԴ աջակցությամբ, հիմնադրվեց <<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ունիվերսալ վարկային կազմակերպություն (ՈԻՎԿ) առևտրային կոոպերատիվը, որը հանդիսանում է Հայաստանում գործող միակ ֆինանսական կոոպերատիվը: Այն ստեղծվել է 57 ֆերմերների կողմից: 2007թ.-ի սեպտեմբերի 18-ին ՀՀ ԿԲ-ի կողմից այն գրանցվեց որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ:

<<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈԻՎԿ առևտրային կոոպերատիվը ՀՀ տարածքում իրականացնում է գյուղատնտեսությամբ զբաղվող և գյուղատնտեսական մթերքի վերամշակում իրականացնող, ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկավորում: Կազմակերպությունը տրամադրում է 4 հիմնական տեսակի ֆինանսական պրոդուկտներ՝ գյուղատնտեսական վարկեր, ագրոբիզնեսի վարկեր, ՓՄՁ վարկեր և գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն (լիզինգ): 2013թ. տարեսկզբի տվյալներով <<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈԻՎԿ ԱԿ անդամ-

փայաստերերի թիվը կազմում է ավելի քան 2300: Կազմակերպությունը ունի 4 մասնաճյուղ<sup>3</sup>:

Մի շարք դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվեցին ծրագրեր և այդ ծրագրերի շրջանակներում աջակցություն տրամադրվեց կոոպերատիվների ստեղծմանը: Օրինակ՝ «ԱՄՔՈՐ»-ի հայաստանյան գրասենյակի միջոցներով 1999-2003թթ. իրականացվեց Համայնքային ասոցիացիաների ծրագիր, որի շրջանակում ստեղծվեցին 7 կոոպերատիվ, 2003-2006թթ. Ֆերմերային կազմակերպություններին օժանդակող ծրագիր՝ 6 կոոպերատիվ, 2009-2011թթ. «Կոոպերատիվ կազմակերպությունների կայունությունը գյուղատնտեսության զարգացման նպատակով» ծրագրի շրջանակում՝ 14 կոոպերատիվ: Վերջինիս շրջանակում կոոպերատիվները ստացան մատչելի վարկեր մեծ քանակությամբ գյուղատնտեսական ներդրանքների գնման նպատակով: Ծրագրի գործընկեր կոոպերատիվները նաև ստացան կառավարման և մարկետինգային ուսուցումներ և խորհրդատվություն:

2011թ. «ՕՔՄՏԱՄ»-ի հայաստանյան գրասենյակը իրականացրեց «Փոքր ֆերմերների բարեկեցություն» ծրագիրը, որի շրջանակում թիրախային համայնքներում հիմնադրվեցին 10 գյուղատնտեսական կոոպերատիվներ, 3 սառնարանային և հավաքման կենտրոններ, որի կառավարումը հանձնվեց նորաբաց կոոպերատիվներին: Նմանօրինակ ծրագրեր ներկայումս նույնպես իրականացվում են ՕՔՄՏԱՄ-ի կողմից:

«Վորլդ Վիժն» հայաստան կազմակերպությունը իր տեղական տնտեսական զարգացման բաղադրիչով նույնպես աշխատում է կոոպերատիվների հետ: Մասնավորապես ՀՀ Գեղարքունիք և Արագածոտն մարզերում կազմակերպության աջակցությամբ 10 սպառողական կոոպերատիվներ ստեղծվեցին՝ նպատակ ունենալով տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնել թիրախային համայնքներում կոոպերատիվների միջոցով:

Բացի վերը նշված կազմակերպություններից, կոոպերատիվների զարգացմանը ուղղված մի շարք ծրագրեր են իրականացրել նաև տեղական հասարակական

---

<sup>3</sup> [www.fca.am](http://www.fca.am)

կազմակերպությունները՝ մեծ մասամբ դոնորային ծրագրերի շրջանակներում (օրինակ՝ «Կանաչ արահետ», «Շեն» և այլն):

Ստեղծված սպառողական կոոպերատիվների ավելին քան 75 տոկոսը ստեղծվել են որևէ դոնորային ծրագրի շրջանակում և այդ դոնորների ակտիվ միջամտությամբ:

Փաստորեն այս փուլում մասնակի հաջողություններ գրանցվեցին դոնորային ծրագրերի, միջազգային կազմակերպությունների տեխնիկական ֆինանսական օժանդակությունների արդյունքում:

Տվյալ փուլում ձևավորված կոոպերատիվների մեծամասնությունը դադարեց գոյություն ունենալ դոնորային ծրագրերի ավարտից հետո կամ գոյություն ուներ միայն թղթի վրա: Կոոպերատիվները մնում են թերզարգացած և հեռու են գյուղատնտեսական արժեքային շղթաների լիարժեք մասը համարվելուց: Պատճառները, որոնք խանգարում են կոոպերատիվներին հասնել հաջողության, տարաբնույթ են, որոնք սակայն, կարելի է դիտարկել իրավական, տնտեսական, տեղեկատվական, երբեմն նաև՝ սոցիալ-հոգեբանական հարթություններում:

**2010-2020թթ.**: Տվյալ փուլում պետական քաղաքականության մեջ մեծապես կարևորվեց ֆերմերային կազմակերպությունների և կոոպերատիվների դերը պետական ռազմավարական ծրագրերում և այն ամրագրվեց « ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության» մեջ<sup>4</sup>:

ՀՀ կառավարության 2012, 2013թթ. գերակա խնդիրների շարքում ներառվել է գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման խթանումը:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի<sup>5</sup> շրջանակներում 2011-2013թթ. ստեղծվել են 67 համայնքային արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ, որոնք պետք է ակտիվ մասնակցություն ունենան ծրագրում և ծրագրով նախատեսված տնտեսական և համայնքային նախագծերում:

Կոոպերատիվների վիճակագրության վերաբերյալ տվյալները ներկայացվում է ստորև:

<sup>4</sup> ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 10-ի N 1476-Ն որոշում

<sup>5</sup> <http://www.arspiu.com/en/carmac>

2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում ըստ Պետական ռեգիստրի տվյալների, գրանցված են 3737 արտադրական և 307 սպառողական կոոպերատիվներ<sup>6</sup>: Սպառողական կոոպերատիվների կազմում ընդգրկված են <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> (CARMAC) ծրագրի շրջանակներում ստեղծված արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվները:

Թե իրականում քանի արտադրական կոոպերատիվ է փաստացի աշխատում և որքան է գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների մասնաբաժինը այս թվի մեջ, դժվար է պարզել:

ՀՀ-ում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված 307 սպառողական կոոպերատիվների քանակը ըստ մարզերի ներկայացված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

**ՀՀ-ում սպառողական կոոպերատիվների քանակը ըստ մարզերի 2013թ. հունվարի 1-ի դրությամբ**

| Մարզեր      | Կոոպերատիվների քանակը |
|-------------|-----------------------|
| Երևան       | 26                    |
| Արագածոտն   | 32                    |
| Արարատ      | 36                    |
| Արմավիր     | 37                    |
| Գեղարքունիք | 38                    |
| Լոռի        | 23                    |
| Կոտայք      | 15                    |
| Շիրակ       | 22                    |
| Սյունիք     | 20                    |
| Վայոց Ձոր   | 23                    |
| Տավուշ      | 35                    |
| Ընդամենը    | 307                   |

Աղբյուրը՝ <<Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների ուղեցույց Հայաստանի համար>> ուսումնասիրությունը

Սպառողական կոոպերատիվներ ավելի շատ են գրանցվել Արագածոտնի (10.4%), Արարատի (11.7%), Արմավիրի (12%), Գեղարքունիքի (12.4%) և Տավուշի


<sup>6</sup> Հիմք է ընդունվել <<Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների ուղեցույց Հայաստանի համար>> ուսումնասիրությունը

(11.4%) մարզերում: Դա կարելի է բացատրել այդ մարզերի գյուղատնտեսական ուղղվածությամբ (հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպառողական կոոպերատիվների մեծ մասը գյուղատնտեսական են) և նշված մարզերում դոնորային գյուղատնտեսական ծրագրերի մեծ քանակով:

Ըստ գնահատման 2013թ. տարեվերջի դրությամբ սպառողական կոոպերատիվների ավելի քան 20 տոկոսը որևէ կապ չունի գյուղատնտեսության հետ: Մնացածը այս կամ այն չափով կարելի է համարել գյուղատնտեսական:

Հայաստանում գրանցված են 127 ընդհանուր բնույթի գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ, 22 կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվներ, 40 ոռոգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվներ և 67 արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ:

Քանի որ 2002թ. «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ոռոգման ջրի մատակարարման գործառույթը սկսեցին իրականացնել ջրօգտագործողների ընկերությունները, 90-ականներին ստեղծված մոտ 400 համայնքային ոռոգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվները լուծարվեցին:



**Գծապատկեր 1: Սպառողական կոոպերատիվների թիվը ըստ գործունեության ոլորտի (<<Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների ուղեցույց Հայաստանի համար>> ուսումնասիրությունը)**

67 արոտագտագործողների միավորում սպառողական կոոպերատիվները ստեղծվել են 2011-2013թթ. <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շրջանակներում, որի տեղաբաշխումը ըստ ՀՀ մարզերի, տարածաշրջանների և համայնքների ներկայացվում է 2-րդ աղյուսակում:

**Աղյուսակ 2**

**<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շրջանակներում ստեղծված սպառողական կոոպերատիվների թիվը ըստ ՀՀ մարզերի, տարածաշրջանների և համայնքների**

| Հ/Հ             | Տարածաշրջան | Համայնք     | Կոոպերատիվի անվանումը   | Անդամների քանակը |
|-----------------|-------------|-------------|---|------------------|
| <b>ՇԻՐԱԿ</b>    |             |             |   |                  |
| 1               | Ամասիա      | Բերդաշեն    | <<ՓՈԳԱ>> ՍԿ   | 58               |
| 2               |             | Ծաղկուտ     | <<Ծաղկուտ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                      | 32               |
| 3               | Անի         | Սառնաղբյուր | <<Սառնաղբյուր արոտագտագործողների>> ՍԿ                                     | 217              |
| 4               |             | Աղին        | <<Աղին համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                         | 92               |
| 5               | Ախուրյան    | Բասեն       | <<Բասեն համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                        | 149              |
| 6               |             | Զրառատ      | <<Հարսնասար-2011>>  | 181              |
| 7               |             | Այգաբաց     | <<Այգաբաց համայնքի <<Այգաբաց-2011>> արոտագտագործողների միավորում>> ՍԿ     | 104              |
| 8               | Արթիկ       | Լեռնակերտ   | <<Լեռնակերտ համայնքի <<Լեռնակերտ-2011>> արոտագտագործողների միավորում>> ՍԿ | 186              |
| 9               |             | Հառիճ       | <<Հառիճ համայնքի <<Հառիճ-2011>> արոտագտագործողների միավորում>> ՍԿ         | 217              |
| 10              |             | Մեծ մանթաշ  | <<Բասեն-2011 արոտագտագործողների>> ՍԿ                                      | 224              |
| 11              |             | Արևշատ      | <<Արևշատ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                       | 325              |
| 12              |             | Սարալանջ    | <<Սարալանջ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                     | 156              |
| 13              |             | Նահապետավան | <<Նահապետավան համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                  | 157              |
| <b>ընդամենը</b> |             |             |   | <b>2098</b>      |
| <b>ԼՈՌԻ</b>     |             |             |   |                  |
| 1               |             | Աթան        | <<Աթան համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                         | 33               |
| 2               |             | Շամուտ      | <<Շամուտ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                       | 34               |
| 3               |             | Դսեղ        | <<Դսեղ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ                         | 284              |

|                  |                |                   |  |             |
|------------------|----------------|-------------------|--|-------------|
| 4                | Թու-<br>մանյան | Ահնիձոր           | <<Ահնիձոր համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ      | 44          |
| 5                |                | Լորուտ            | <<Լորուտ համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ       | 84          |
| 6                |                | Մարց              | <<մարց համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ            | 45          |
| 7                |                | Քարիջ             | <<Քարիջ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ           | 43          |
| <b>ընդամենը</b>  |                |                   |  | <b>567</b>  |
| <b>ԱՐԱԳԱՇՈՏՆ</b> |                |                   |  |             |
| 1                | Թալին          | Թաթուլ            | <<Թաթուլ համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ       | 98          |
| 2                |                | Ն. Սասա-<br>նաշեն | <<Ն. Սասանաշեն համայնքի արոտագտագործողների<br>միավորում>> ՄԿ | 172         |
| 3                |                | Ագարակա<br>վան    | <<Ագարակավան համայնքի արոտագտագործողների<br>միավորում>> ՄԿ   | 119         |
| 4                |                | Աշնակ             | <<Աշնակ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ           | 131         |
| 5                | Արա-<br>գած    | Գեղաձոր           | <<Գողաձոր համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ      | 180         |
| 6                |                | Նորաշեն           | <<նորաշեն համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ      | 180         |
| 7                |                | Բերք-<br>առատ     | <<Բերքառատ համայնքի արոտագտագործողների<br>միավորում>> ՄԿ     | 135         |
| 8                |                | Լեռնապար          | <<Լեռնապար համայնքի արոտագտագործողների<br>միավորում>> ՄԿ     | 80          |
| 9                | Աշտա-<br>րակ   | Ավան              | <<Ավան համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ            | 157         |
| <b>ընդամենը</b>  |                |                   |  | <b>1252</b> |
| <b>ՄՅՈՒՆԻՔ</b>   |                |                   |  |             |
| 1                | Գորիս          | Ակներ             | <<Ակներ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ           | 131         |
| 2                |                | Վերիշեն           | <<Վերիշեն համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ      | 186         |
| 3                |                | Խնածախ            | <<Խնածախ համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ       | 120         |
| 4                |                | Խոզնավար          | <<Խոզնավար համայնքի արոտագտագործողների<br>միավորում>> ՄԿ     | 68          |
| 5                |                | Խնձորեսկ          | <<Խնձորեսկ համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ     | 263         |
| 6                |                | Վաղատու<br>ր      | <<Վաղատուր համայնքի արոտագտագործողների<br>միավորում>> ՄԿ     | 78          |
| 7                |                | Քարաշեն           | <<Քարաշեն համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ      | 88          |
| 8                |                | Տաթև              | <<Տաթև համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ            | 110         |
| 9                |                | Տեղ               | <<Տեղ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ             | 240         |
| 10               |                | Հարժիս            | <<Հարժիս համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ       | 127         |
| 11               | Միսիան         | Ծղուկ             | <<Ծղուկ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ           | 66          |
| 12               |                | Շաքի              | <<Շաքի համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ            | 62          |
| 13               |                | Սպանդարյ<br>ան    | <<Սպանդարյան համայնքի արոտագտագործողների<br>միավորում>> ՄԿ   | 79          |
| 14               |                | Գորայք            | <<Գորայք համայնքի արոտագտագործողների միավորում>><br>ՄԿ       | 88          |

| <b>ընդամենը</b>    |                   |               |  | <b>1706</b> |
|--------------------|-------------------|---------------|--|-------------|
| <b>ՏԱՎՈՒՇ</b>      |                   |               |  |             |
| <b>1</b>           | <b>Իջևան</b>      | Ն. Ծաղկավան   | <<Ն. Ծաղկավան համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ   | 44          |
| <b>2</b>           |                   | Աչաջուր       | <<Աչաջուր համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ       | 145         |
| <b>3</b>           |                   | Սևքար         | <<Սևքար համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ         | 116         |
| <b>4</b>           |                   | Սարիգյուղ     | <<Սարիգյուղ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ     | 97          |
| <b>5</b>           |                   | Կիրանց        | <<Կիրանց համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ        | 45          |
| <b>6</b>           |                   | Ենոքավան      | <<Ենոքավան համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ      | 57          |
| <b>7</b>           |                   | Լուսաձոր      | <<Լուսաձոր համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ      | 47          |
| <b>8</b>           | <b>Նոյմբերյան</b> | Ոսկեպար       | <<Ոսկեպար համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ       | 75          |
| <b>9</b>           |                   | Բաղանիս       | <<Բաղանիս համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ       | 52          |
| <b>10</b>          |                   | Զուջևան       | <<Զուջևան համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ       | 55          |
| <b>11</b>          |                   | Դովեղ         | <<Դովեղ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ         | 42          |
| <b>ընդամենը</b>    |                   |               |  | <b>775</b>  |
| <b>ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ</b> |                   |               |  |             |
| <b>1</b>           | <b>Սևան</b>       | Զկալովկա      | <<Զկալովկա համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ      | 102         |
| <b>2</b>           |                   | Ծովագյուղ     | <<Ծովագյուղ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ     | 275         |
| <b>3</b>           |                   | Գեղամավան     | <<Գեղամավան համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ     | 36          |
| <b>4</b>           | <b>Մարտունի</b>   | Վարդաձոր      | <<Վարդաձոր համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ      | 75          |
| <b>5</b>           |                   | Մաղինա        | <<Մաղինա համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ        | 103         |
| <b>6</b>           |                   | Վերին Գետաշեն | <<Վերին Գետաշեն համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ | 307         |
| <b>7</b>           |                   | Լանջաղբյուր   | <<Լանջաղբյուր համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ   | 182         |
| <b>8</b>           |                   | Շորժա         | <<Շորժա համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ         | 151         |



|                 |                                   |             |  |             |
|-----------------|-----------------------------------|-------------|--|-------------|
| 9               | Ճամբարակ                          | Թթուջուր    | <<Թթուջուր համայնքի արոտօգտագործողների միավորում>> ՄԿ    | 200         |
| 10              |                                   | Արդանիշ     | <<Արդանիշ համայնքի արոտօգտագործողների միավորում>> ՄԿ     | 59          |
| 11              | Գավառ                             | Գեղարքունիք | <<Գեղարքունիք համայնքի արոտօգտագործողների միավորում>> ՄԿ | 265         |
| 12              |                                   | Ձորագյուղ   | <<Ձորագյուղ համայնքի արոտօգտագործողների միավորում>> ՄԿ   | 230         |
| 13              | Վարդենիս                          | Մեծ Մասրիկ  | <<Մեծ Մասրիկ համայնքի արոտօգտագործողների միավորում>> ՄԿ  | 300         |
| <b>ընդամենը</b> |                                   |             |  | <b>2285</b> |
| <b>67</b>       | <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՈՒՄ 6 ՄԱՐԶՈՒՄ</b> |             |  | <b>8683</b> |

Պատճառները, որոնք խանգարում են կոոպերատիվներին հասնել հաջողության, համարվելու արժեքային համակարգի լիիրավ անդամներ, ինչպես նշեցինք, բազմապիսի են: Այս պատճառների մեջ իրենց ուրույն տեղն են գրավում իրավական հարթության մեջ գտնվող պատճառները, մասնավորապես ՀՀ-ում գործող կոոպերատիվներին առնչվող օրենքները:

ՀՀ գործող օրենքները լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն: Օրենսդրական բարեփոխումները էական նշանակություն կունենան կոոպերատիվների զարգացման և կայունության համար:

**Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ (ՕՐԵՆՔ,  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ, ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏ ԵՎ ԱՅԼՆ)**

Հայաստանի Հանրապետությունը չունի կոոպերատիվների վերաբերյալ մեկ ամբողջական, համապարփակ օրենք: Կոոպերատիվների ոլորտը կարգավորվում է հետևյալ հիմնական իրավական ակտերով.

**1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ՀՕ-239, ընդունված է 05.05.1998թ., ուժի մեջ է՝ 01.01.1999թ.):**

Օրենսգրքի «Իրավաբանական անձանց տեսակները» 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ»:

Օրենսգրքի **117-121 հոդվածները** (պարագրաֆ 3) ամբողջությամբ վերաբերվում են կոոպերատիվներին:

Օրենսգրքի **117-րդ հոդվածը** վերաբերում է կոոպերատիվների հիմնական դրույթներին, որոնցով տրվում է կոոպերատիվների սահմանումը, կոոպերատիվների կանոնադրության պարունակությանը, ինչպես նաև հղում է կատարվում կոոպերատիվների առանձին տեսակների առանձնահատկություններին և իրավական վիճակը սահմանող այլ օրենքներին:

Մասնավորապես, ըստ նշված հոդվածի 1-ին մասի «Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը»:

Հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ բացի օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասում («Իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանվում են իրավաբանական անձի անվանումը, նրա գտնվելու վայրը, ինչպես նաև պարունակվում են համապատասխան տեսակի իրավաբանական անձանց համար՝ սույն օրենսգրքով և (կամ) օրենքով նախատեսված այլ տեղեկություններ») նշված տեղեկություններից, «պետք է պայմաններ պարունակի կոոպերատիվի անդամների

փայլավճարների չափի, դրանք վճարելու կարգի և այդ պարտավորությունը խախտելու համար կոռպերատիվի անդամների պատասխանատվության, կոռպերատիվի կառավարման մարմինների կազմի, իրավասության ու նրանց որոշումների ընդունման՝ ներառյալ այն հարցերով, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ, կոռպերատիվի անդամների կողմից կոռպերատիվի կրած վնասները հատուցելու կարգի մասին»:

Հոդվածի 3-րդ մասով սահմանված է դրույթ՝ համաձայն որի «Կոռպերատիվի անվանումը պետք է ցուցում պարունակի նրա գործունեության հիմնական նպատակի մասին, ինչպես նաև ներառի «կոռպերատիվ» բառը»:

Տվյալ հոդվածի եզրափակիչ 4-րդ մասում սահմանված է, որ «Կոռպերատիվների առանձին տեսակների, մասնավորապես՝ սպառողական կոռպերատիվների ու համատիրությունների առանձնահատկությունները և իրավական վիճակը, ինչպես նաև նրանց անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով»: Մասնավորապես այն վերաբերում է «Սպառողական կոռպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և «Համատիրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

Օրենսգրքի **118-րդ հոդվածը** վերաբերվում է կոռպերատիվի գույքի կառավարմանը, որտեղ տրվում է կոռպերատիվի գույքի նրա անդամների փայերի բաժանումը, փայլավճարների մուծմանը, ամբողջական ֆոնդերի ձևավորմանը, դրանց օգտագործման մասին որոշման ընդունման կարգին, լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վճարների փակմանը, կոռպերատիվների անդամների համապարտ սուբսիդար պատասխանատվությանը, կոռպերատիվի լուծարումից հետո մնացած գույքի բաշխման մասին և այլն:

Մասնավորապես, ըստ նշված հոդվածի 1-ին մասի՝ «Կոռպերատիվի սեփականության ներքո գտնվող գույքը, կոռպերատիվի կանոնադրությանը համապատասխան, բաժանվում է նրա անդամների փայերի:

Հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Կոոպերատիվի անդամը պարտավոր է մինչև կոոպերատիվի գրանցումն ամբողջությամբ մուծել փայավճարը, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ»:

Հոդվածի 3-րդ մասը վերաբերում է անբաժանելի ֆոնդերին, մասնավորապես սահմանվում է, որ «Կոոպերատիվի կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ կոոպերատիվին պատկանող գույքի որոշակի մասը կանոնադրությամբ սահմանված նպատակներով օգտագործվող անբաժանելի ֆոնդ է: Անբաժանելի ֆոնդերն օգտագործելու մասին որոշումը կոոպերատիվի անդամներն ընդունում են միաձայն, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ»:

Հոդվածի 4-րդ մասը վերաբերում է լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասների փակմանը, մասնավորապես. «Կոոպերատիվի անդամները պարտավոր են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, լրացուցիչ վճարների միջոցով փակել առաջացած վնասները: Այս պարտականությունը չկատարելու դեպքում կոոպերատիվը, պարտատերերի պահանջով, կարող է լուծարվել դատական կարգով: Կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չմուծված մասի սահմաններում»:

Հոդվածի 5-րդ մասը սահմանում է կոոպերատիվի լուծարումից հետո նրա գույքի բաշխմանը, մասնավորապես համաձայն Օրենսգրքի. «Կոոպերատիվի լուծարումից հետո մնացած գույքը բաշխվում է նրա անդամների միջև՝ կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան»:

Օրենսգրքի **119-րդ հոդվածը** առնչվում է կոոպերատիվի կառավարմանը, մասնավորապես, կոոպերատիվների կառավարման բարձրագույն մարմին, գործադիր մարմիններին, կառավարման մարմինների և նրանց որոշումների ընդունման կարգին, կոոպերատիվի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններին, ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելիս կոոպերատիվի անդամի ձայնի իրավունքին և այլն:

Մասնավորապես. ըստ նշված հոդվածի 1-ին մասի. «Կոոպերատիվի կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է: Հիսունից ավելի անդամ ունեցող կոոպերատիվում կարող է ստեղծվել դիտորդ խորհուրդ, որը վերահսկողություն է իրականացնում կոոպերատիվի գործադիր մարմինների գործունեության նկատմամբ: Դիտորդ խորհրդի անդամներն իրավունք չունեն գործել կոոպերատիվի անունից: Կոոպերատիվի գործադիր մարմիններն են՝ նրա վարչությունը և (կամ) նախագահը: Նրանք ղեկավարում են կոոպերատիվի ընթացիկ գործունեությունը և հաշվետու են դիտորդ խորհրդին ու կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովին: Դիտորդ խորհրդի և վարչության անդամներ, ինչպես նաև կոոպերատիվի նախագահ կարող են լինել միայն կոոպերատիվի անդամները: Դիտորդ խորհրդի կամ գործադիր մարմնի անդամը չի կարող լինել համանման այլ կոոպերատիվի անդամ: Կոոպերատիվի անդամը չի կարող միաժամանակ լինել դիտորդ խորհրդի և վարչության անդամ կամ կոոպերատիվի նախագահ»:

Հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ «Կոոպերատիվի կառավարման մարմինների իրավասությունը և նրանց որոշումների ընդունման կարգը սահմանվում են օրենքով ու կոոպերատիվի կանոնադրությամբ»:

Հոդվածի 3-րդ մասը վերաբերում է կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններին, մասնավորապես Կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- կոոպերատիվի կանոնադրությունը փոփոխելը.
- դիտորդ խորհուրդ կազմավորելը և նրա անդամների լիազորությունները դադարեցնելը, ինչպես նաև կոոպերատիվի գործադիր մարմիններ կազմավորելն ու նրանց լիազորությունները դադարեցնելը, եթե կոոպերատիվի կանոնադրությամբ այդ իրավունքը չի տրվել դիտորդ խորհրդին.
- կոոպերատիվի անդամներ ընդունելը և հեռացնելը.
- կոոպերատիվի տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշռի հաստատելն ու վնասները բաշխելը.
- կոոպերատիվի վերակազմակերպման և լուծարման մասին որոշում ընդունելը:

Հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելիս կոոպերատիվի անդամն ունի մեկ ձայնի իրավունք:

Օրենսգրքի **120-րդ հոդվածը** առնչվում է կոոպերատիվի անդամության դադարմանը և փայի անցմանը, որը մասնավորապես վերաբերում է կոոպերատիվի անդամի կոոպերատիվից դուրս գալու կարգին, կոոպերատիվի անդամի, կոոպերատիվի կանոնադրությամբ իր վրա դրված պարտավորությունները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ այլ դեպքերում կոոպերատիվից հեռացման պայմանները, կոոպերատիվի անդամի փայը այլ անդամների հանձնելու իրավունքին, կոոպերատիվի անդամների ժառանգությանը, կոոպերատիվի անդամի փայի վրա բռնագանձում տարածելու պայմաններին և այլն:

Հոդվածի 1-ին մասում, որը վերաբերվում է կոոպերատիվի անդամին կոոպերատիվից դուրս գալու իրավունքին սահմանում է. «Կոոպերատիվի անդամն իրավունք ունի դուրս գալ կոոպերատիվից: Այդ դեպքում նրան պետք է վճարվի նրա փայի արժեքը կամ տրվի դրան համապատասխան գույք, ինչպես նաև կատարվեն կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ վճարներ: Կոոպերատիվից դուրս եկող անդամին փայի արժեքը վճարվում կամ այլ գույքը տրվում է ֆինանսական տարին ավարտվելուց և կոոպերատիվի հաշվապահական հաշվեկշիռը հաստատվելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ:

Հոդվածի 2-րդ մասում, որը վերաբերվում է օրենքով սահմանված դեպքերում կոոպերատիվի անդամների կոոպերատիվից հեռացմանը, սահմանում է. «Կոոպերատիվի անդամը, կոոպերատիվի կանոնադրությամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում, ինչպես նաև օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում, կարող է ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացվել կոոպերատիվից: Կոոպերատիվից հեռացված անդամը ունի փայ և կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ վճարներ ստանալու իրավունք»:

Հոդվածի 3-րդ մասում, որը վերաբերվում է կոոպերատիվի անդամի փայը այլ անդամի հանձնմանը, սահմանում է, որ «Կոոպերատիվի անդամն իրավունք ունի իր

փայլը կամ դրա մասը հանձնել կոոպերատիվի այլ անդամի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ: Փայլը (դրա մասը) կոոպերատիվի անդամ չհամարվող քաղաքացուն հանձնել թույլատրվում է միայն կոոպերատիվի համաձայնությամբ: Այդ դեպքում կոոպերատիվի մյուս անդամներն օգտվում են նման փայլը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից: Եթե կոոպերատիվի անդամները կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված ժամկետում չեն օգտվել այդ իրավունքից, փայլը կարող է օտարվել երրորդ անձի»:

Հոդվածի 4-րդ մասը, որը վերաբերվում է կոոպերատիվի անդամների ժառանգությանը ամրագրվում է, որ «Կոոպերատիվի անդամի մահվան դեպքում նրա ժառանգները կարող են դառնալ կոոպերատիվի անդամ, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ: Հակառակ դեպքում՝ կոոպերատիվը ժառանգներին վճարում է կոոպերատիվի մահացած անդամի փայլի արժեքը»:

Հոդվածի 5-րդ մասում, որը առնչվում է կոոպերատիվի անդամի փայլի բռնագանձման պայմաններին, ամրագրվում է, որ «Կոոպերատիվի անդամի անձնական պարտքերի համար նրա փայլի վրա բռնագանձում տարածել թույլատրվում է միայն այդ պարտքերը մարելու համար նրա այլ գույքի անբավարարության դեպքում: Կոոպերատիվի անդամի պարտքերով չի կարող բռնագանձում տարածվել կոոպերատիվի անբաժանելի ֆոնդերի վրա»:

Օրենսգրքի **121-րդ հոդվածը**, որը վերաբերում է կոոպերատիվների վերակազմավորմանը և լուծարմանը, սահմանում է, որ «Կոոպերատիվն իր անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել: Կոոպերատիվի վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերն ու կարգը սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հնարավորություն է տալիս գյուղատնտեսությունում տնտեսավարողների համատեղ գործունեության իրականացում առանց իրավաբանական անձ ձևավորելու՝ համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **26-րդ հոդվածի** (որտեղ լրացում է կատարվել 26.12.08 ՀՕ-243-Ն և փոփոխություն և լրացում է կատարվել

21.12.10 ՀՕ-217-Ն) 2-րդ մասով սահմանվել է, որ «Քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Քաղաքացիներն առանց պետական գրանցման կամ հաշվառման (առանց իրավաբանական անձ կազմավորելու կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելու) իրավունք ունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե հանդիսանում են արտոնագրային վճար վճարողներ կամ **գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով կնքել են համատեղ գործունեության պայմանագիր: Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ են հանդիսանում միայն տվյալ համատեղ գործունեության պայմանագրի սահմաններում»:**

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի **1026 հոդվածը** (լրացվել է 26.12.08 ՀՕ-243-Ն), որը վերաբերվում է **համատեղ գործունեության պայմանագրին**, 1-ին մասով սահմանված է, որ «Համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար»: Հոդվածի 2-րդ մասը, որը վերաբերում է համատեղ գործունեության պայմանագրի կողմերին, սահմանում է, որ «Ձեռնարկատիրական գործունեության համար կնքված համատեղ գործունեության պայմանագրի կողմեր կարող են լինել միայն անհատ ձեռնարկատերերը և (կամ) առևտրային կազմակերպությունները և (կամ) **գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները**»: Հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Համատեղ գործունեության պայմանագիրը կնքվում է գրավոր»:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի **1038<sup>1</sup> հոդվածը** (լրացվել է 26.12.08 ՀՕ-243-Ն), որը վերաբերում է **գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիների կողմից կնքվող համատեղ գործունեության պայմանագրի առանձնահատկություններին**, 1-ն մասով սահմանում է, որ «Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելու նպատակով քաղաքացիների կողմից համատեղ գործունեության պայմանագիրը կնքվում է գրավոր», իսկ 2-րդ մասով ամրագրված է



«Համատեղ գործունեության պայմանագրի կողմերից մեկի պահանջով պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով: Եթե, պայմանագրի համաձայն, մասնակիցների կողմից պետք է ներդրվեն անշարժ գույք կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում պայմանագիրը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման: Նոտարական կարգով վավերացված պայմանագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից, իսկ պայմանագրից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ծագում են պետական գրանցման պահից»: Տվյալ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Պարզ գրավոր ձևով (առանց նոտարական վավերացման) կնքվող համատեղ գործունեության պայմանագիրը պետք է ստորագրեն պայմանագրի բոլոր մասնակիցները (կողմերը), որոնց ստորագրության իսկությունը կարող է հաստատել համայնքի ղեկավարը»: Հոդվածի 4-րդ մասը վերաբերվում է համատեղ գործունեության պայմանագրում պարտադիր նշվող դրույթներին, մասնավորապես սահմանվում է, որ «Համատեղ գործունեության պայմանագրում պարտադիր պետք է նշվեն պայմանագրի կողմերը, նրանցից յուրաքանչյուրի կողմից ներդրվող ավանդի (գույք կամ գույքային իրավունք կամ այլ ներդրման) տեսակները, արժեքը, դրանց դրամական գնահատման չափը, ավանդի օգտագործման կարգը, մասնակիցների անունից հանդես գալու իրավունք ունեցող և մասնակիցների ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի հաշվապահական հաշվառումը (պայմանագրով ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույք նախատեսված լինելու դեպքում) իրականացնող անձինք և նրանց անձնագրային տվյալները, շահույթի բաշխման կարգը, մասնակիցների անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի փոփոխման կարգը, ինչպես նաև օրենքով սահմանված ու կողմերի համաձայնությամբ այլ դրույթներ»:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն համատեղ գործունեության պայմանագրի օրինակելի ձևը հաստատված է ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 6-ի «Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիների

**կողմից կնքվող համատեղ գործունեության պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին»> N1270-Ն որոշմամբ:**

Տվյալ հոդվածի (1038<sup>1</sup>) 6-րդ մասով սահմանված է, որ «Համատեղ գործունեության պայմանագիրը չի լուծվում, կամ պայմանագրի գործողությունը չի դադարում օրենսգրքի 1035-րդ հոդվածով (որը վերաբերվում է համատեղ գործունեության պայմանագրի դադարմանը) նախատեսված դեպքերում, բացառությամբ պայմանագրի ժամկետը լրանալու, ինչպես նաև այն դեպքում, երբ պայմանագրի կողմ մնում է միայն մեկ մասնակից: Պայմանագրի մասնակից կողմի մահվան դեպքում պայմանագրի կողմ կարող է հանդիսանալ նրա ժառանգը»:

Գյուղատնտեսությունում առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեության պայմանագրով գործունեությունը խթանելու համար, ավելացված արժեքի հարկի վճարման նվազագույն շեմի համար առանձին գործող գյուղատնտեսությունում տնտեսավարողների հետ հարկավորման հավասար պայմաններ ստեղծելու համար «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2011թ. կատարվեց համապատասխան փոփոխություն (ՀՕ-126-Ն, 2011թ. մայիսի 6), համաձայն որի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ գործունեության պայմանագրով գործող գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող սուբյեկտներից (մասնակիցներից) յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես առանձին հարկ վճարող:

Համատեղ գործունեության պայմանագրով գործող սուբյեկտների (մասնակիցների) գործունեությունը համարվում է գյուղատնտեսական արտադրություն, եթե նրանց գործունեության արդյունքում արտադրված արտադրանքի 90 տոկոսը գյուղատնտեսական արտադրանք է: Սույն հոդվածի իմաստով գյուղատնտեսական արտադրանք է համարվում «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված արտադրանքը:

**2. Սպառողական կոոպերատիվների բնագավառը կարգավորող կարևոր օրենսդրական ակտերից է <<Սպառողական կոոպերացիայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը (30 դեկտեմբերի 1993 թ. ՀՕ-91, ընդունվել է 13**

դեկտեմբերի 1993թ.): Օրենքը էական փոփոխությունների է ենթարկվել 2012թ. (11.09.2012թ. ՀՕ-184-Ն):

**<<Սպառողական կոոպերացիայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը** սահմանում է սպառողական կոոպերացիայի կազմակերպական-իրավական հիմունքները, սպառողական կոոպերացիայի ձևավորման (ստեղծման) գործունեության կարգն ու պայմանները, ինչպես նաև պետական մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների սկզբունքները:

Օրենքի 1-ին հոդվածը վերաբերում է սպառողական կոոպերատիվի սահմանմանը, դրա գործունեության կարգավորման օրենսդրական շրջանակին և սպառողական կոոպերատիվի գործունեության շրջանակին:

Հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունում սպառողական կոոպերատիվը 5-ից ոչ պակաս անդամների (մասնակիցների) կարիքներն ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով կամավոր հիմունքներով ձևավորված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է»:

Տվյալ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է, որ «Սպառողական կոոպերատիվի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով»:

3-րդ մասը ամրագրում է, որ «Սպառողական կոոպերատիվը, իր նպատակներից ելնելով, կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործունեություն»:

Օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է սպառողական կոոպերատիվների մասնակիցներին, սահմանում է, որ «Սպառողական կոոպերատիվի մասնակիցներ (անդամներ) կարող են լինել քաղաքացիները և (կամ) համատեղ գործունեության պայմանագիր կնքած անհատ ձեռնարկատերերն ու գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները»:

Օրենքի 3-րդ հոդվածը, որը վերաբերում է սպառողական կոոպերատիվների միությանը սահմանում է վերջիններիս էությունը, միության մասնակիցների իրավունքները, միության բարձրագույն մարմինը և դրա իրավասությունների շրջա-

նակը, միության ներկայացուցիչների ընդհանուր ժողովում մասնակիցների ներկայացման կարգը, ընդհանուր ժողովում որոշումների ընդունման կարգը, միության գործունեության դադարման պայմանները, միության գործադիր և վերահսկիչ մարմինները:

Հոդվածի 1-ին մասը, որ վերաբերում է սպառողական կոոպերատիվների միության էությանը և դրա գործունեության կարգավորմանը ամրագրում է, որ «Սպառողական կոոպերատիվների միությունը (այսուհետ՝ միություն) իրավաբանական անձանց գույքային և (կամ) այլ մասնակցությամբ կազմավորված սպառողական կոոպերացիա է: Միությունն իրավաբանական անձ է, որի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով իրավաբանական անձանց միությունների համար սահմանված դրույթներով՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկություններով:

Հոդվածի 2-րդ մասը, որը վերաբերվում է միության մասնակցի իրավունքներին, սահմանում է, որ «Միության մասնակիցն իրավունք ունի դուրս գալու միության կազմից՝ միության կանոնադրությամբ սահմանված կարգով դրամական կամ նյութական այլ արտահայտությամբ ստանալով միությանը պատկանող գույքի իր բաժինը»:

3-րդ մասը, որը առնչվում է միության բարձրագույն մարմնին և դրա իրավասությունների շրջանակին, ամրագրում է. «Միության կառավարման բարձրագույն մարմինն իր մասնակիցների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն է, որը որոշում է միության անդամների փայավճարի չափը (եթե միությանը մասնակցելը պայմանավորված է փայավճարով), ընտրում է միության ղեկավար և վերահսկիչ մարմիններ, լսում նրանց հաշվետվությունները, սահմանում այդ մարմինների պահպանման ծախսերը, որոշում դուստր ընկերություններ հիմնադրելու, վերակազմակերպելու, լուծարելու հարցերը, ինչպես նաև սույն օրենքով և միության կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում լուծում է այլ հարցեր»:

Հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Ներկայացուցիչների ընդհանուր ժողովում միության մասնակիցները, անկախ փայավճարի չափից, առաջադրում են հավասար թվով ներկայացուցիչներ: <<Ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է միության կազմի մեջ մտած բոլոր մասնակիցների ներկայացուցիչների 50 տոկոսից ավելին» (հոդվածի 5-րդ մաս):

Հոդվածի 6-րդ մասը, որը վերաբերվում է միության գործունեության դադարեցմանը, սահմանում է, որ «Միության գործունեությունը դադարում է ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ գաղտնի քվեարկությամբ, եթե դրա օգտին քվեարկել է միության կազմի մեջ մտած բոլոր մասնակիցների ներկայացուցիչների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երկու երրորդը»:

Հոդվածի 7-րդ մասը, որը վերաբերում է միության գործադիր և վերահսկիչ մարմիններին, սահմանում է, որ «Միության գործադիր մարմինը վարչությունն է, իսկ վերահսկիչ մարմինը՝ վերստուգիչ հանձնաժողովը: Միության վարչության և վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է միության կանոնադրությամբ»:

Հոդվածի 8-րդ մասը, որը վերաբերում է միության գործունեության դադարման դեպքում գույքի բաշխման կամ հետագա օգտգործման կարգին, ապա ամրագրված է, որ «Միության գործունեության դադարման դեպքում հարկերը վճարելուց, պարտադիր մյուս վճարումներն իրականացնելուց, պարտատերերի հանդեպ պարտավորությունները կատարելուց հետո մնացած գույքի բաշխման կամ հետագա օգտագործման կարգը որոշվում է միության կանոնադրությամբ»:

Օրենքի 4-րդ հոդվածը, որը վերաբերվում է **սպառողական կոոպերատիվների և սպառողական կոոպերատիվների միությունների ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններին**, ընդգրկում է սպառողական կոոպերատիվների իրավունքների և շահերի պաշտպանության, սպառողական կոոպերատիվների գործունեության անկախության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կոոպերատիվների գործունեությանն միջամտման արգելման, անօրինական միջա-

մտության հետևանքով սպառողական կոռպերատիվին հասցված վնասի փոխհատուցման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և սպառողական կոռպերատիվի պարտավորությունների համար երկուստեք պարտավորություններ չկրելու և այլ դրույթներ:

Հոդվածի 1-ին մասում, որը առնչվում է սպառողական կոռպերատիվի և դրանց միությունների իրավունքների և շահերի պաշտպանությանը, ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է սպառողական կոռպերատիվի և դրանց միությունների իրավունքները և պաշտպանում նրանց օրինական շահերը: Պետությունն աջակցում է սպառողական կոռպերատիվների զարգացմանը և տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանը»:

Հոդվածի 2-րդ մասում, որն առնչվում է սպառողական կոռպերատիվի գործունեության անկախությանը, սահմանված է, որ սպառողական կոռպերատիվն իր գործունեության մեջ անկախ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպություններից:

Հոդվածի 3-րդ մասը, որը կապված է սպառողական կոռպերատիվի գործունեության միջամտությանը, սահմանում է. «Արգելվում է սպառողական կոռպերատիվի գործունեությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի»:

Հոդվածի 4-րդ մասում, որը վերաբերում է սպառողական կոռպերատիվին անօրինական միջամտության հետևանքով հասցված վնասի փոխհատուցմանը, սահմանված է. «Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների անօրինական միջամտության հետևանքով սպառողական կոռպերատիվին հասցված նյութական վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Հոդվածի 5-րդ մասը, որը վերաբերում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և սպառողական կոռպերատիվի երկուստեք պարտավորություններ չկրելուն, ամրագրված է, որ «Պետական կառավարման և

տեղական ինքնակառավարման մարմինները սպառողական կոոպերատիվի պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, իսկ վերջիններս պատասխանատվություն չեն կրում այդ մարմինների պարտավորությունների համար:

5-րդ հոդվածը վերաբերում է **սպառողական կոոպերատիվի պետական գրանցմանը** և սահմանվում է. «Սպառողական կոոպերատիվը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պետական գրանցման օրվանից»:

**3. Կոոպերատիվների ինքնությանը վերաբերող էլեմենտներ կան նաև «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (2002թ. հունիսի 1 ՀՕ-374-Ն) և «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (2002թ. հունիսի 3 ՀՕ-332):**

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի խնդիրը «ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության հիմունքները, դրանց ստեղծման ու գործունեության դադարեցման հիմքերը, ինչպես նաև պետական և այլ մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների սկզբունքները սահմանելն է՝ նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգի արդյունավետությունը» (հոդված 1):

«Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքը «կարգավորում է գյուղատնտեսական վարկային ակումբների կարգավիճակը և դրանց գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, սահմանում է ակումբների կազմավորման, անդամակցության, կառավարման սկզբունքները, միջոցների ներգրավման և ակումբի անդամների փոխատվության, ապահովագրության այլ ծառայությունների ու սպասարկումների մատուցման

պարտադիր պահանջներն ու պայմանները, ինչպես նաև դրանց գործունեության կարգավորման, վերահսկողության և հաշվետվությունների կարգը»:

Առաջինի դեպքում ջրօգտագործողների ընկերությունը սահմանվում է, որպես ջրօգտագործողների (մեր պարագայում մեծ մասամբ ֆերմերների) կողմից ստեղծված, շահույթի նպատակ չհետապնդող, հանրային շահերով առաջնորդվող կազմակերպություն, որի նպատակն է իրականացնել ոռոգման համակարգի շահագործումը և պահպանումը: Ընկերությունը ոռոգման ջուր է մատակարարում իր անդամ և ոչ անդամ ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող ոռոգման ջուր օգտագործողներին, ովքեր ընկերության սպասարկման տարածքում ունեն սեփականության կամ 3 տարուց ավելի ժամկետով օգտագործման իրավունքով իրենց պատկանող հողատարածք: Ի տարբերություն կոոպերատիվների, ՋՕԸ-երը անդամների համատեղ սեփականությունը չեն և ընկերության անդամ ջրօգտագործողը ընկերության գույքի նկատմամբ բաժնի իրավունք չունի: Այս օրենքում առկա են կոոպերատիվների միջազգային իրավունքի դրույթներին համապատասխան որոշ կետեր, օրինակ՝ կազմակերպական կառուցվածքը, մեծ թվով անդամների առկայության դեպքում ընդհանուր ժողովի անցկացում ներկայացուցիչների միջոցով ըստ ներկայացուցչական գոտիների, մեկ անդամ մեկ ձայն (չնայած կանոնադրությամբ կարող է սահմանվել ձայների քանակը սպասարկման տարածքում ջրօգտագործողի ունեցած հողատարածքի չափից) և այլն:

Այս ընկերությունների գործունեությունը համակարգվում է ՀՀ կառավարության կողմից ստեղծված Կանոնակարգող խորհրդի կողմից, որի սպասարկվող տարածքների տեխնիկատնտեսական նպատակահարմարության մասին գրավոր դրական եզրակացությունից հետո նոր միայն հնարավոր է 1 ամսվա ընթացքում հրավիրել հիմնադիր ժողով և նշանակել ընկերության առաջին ժողովի գումարման ժամկետը: Այս կանոնակարգող խորհուրդը և ջրային համակարգերի կառավարման մարմինը մեծ հաշվով վերահսկում և համակարգում են ջրօգտագործողների ընկերությունների և դրանց միությունների գործունեությունը՝ ներառյալ կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու, ընկերության



վերակազմակերպվելու և լուծարվելու համար համաձայնություն տալը (տես հոդված 4, 6, 32, 32.1):

Նշված օրենքով նաև սահմանվում է, որ պետության կողմից ռոռզման համակարգերի շահագործմանը և պահպանմանն ուղղված օգնությունները, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության մյուս օգնությունները, կարող են տրամադրվել Ընկերությունների և Միությունների միջոցով: Մեր տվյալներով նման օգնություն մինչ այժմ հանդիսացել է ռոռզման ջրի գնի նվազմանը ուղղված պետական սուբսիդիան:

4. Կոոպերատիվների ինքնությանը և գործունեությանը վերաբերող էլեմենտներ պարունակող մյուս օրենքը «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքն է, որն ամենայն հավանականությամբ կարող էր հավակնել կոոպերատիվների մասին օրենք կոչվելուն, քանի որ պարունակում է կոոպերատիվների գաղափարախոսությանը և արժեքային համակարգին մոտարկված ավելի շատ տարրեր:

Օրենքով գյուղատնտեսական վարկային ակումբը սահմանվում է որպես գյուղատնտեսական գործունեություն իրականացնող անձանց անդամության վրա հիմնված, ֆինանսական փոխադարձ օգնության նպատակով ստեղծված կամավոր միավորում: Այն շահույթի նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է և կարող է ստեղծվել ոչ առևտրային կոոպերատիվի կամ իրավաբանական անձանց միության կազմակերպաիրավական ձևով: Օրենքում հստակ նշվում է, որ ակումբի անդամներին մատուցվող ֆինանսական փոխադարձ օգնության ծառայություններն ու սպասարկումները չեն հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության առարկա և իրականացվում են բոլոր անձանց անունից և նրանց սուբսիդիար ռիսկով:

Օրենքում տեղ են գտել մի շարք դրույթներ որոնք համապատասխանում են Կոոպերատիվների Միջազգային դաշնության դրույթներին: Օրինակ, ակումբի սեփական միջոցները ստորադասվում են 2 մասի՝ **բաժանելի սեփականության** և **համատեղ**՝ անբաժանելի սեփականության: Ակումբի բաժանելի սեփականությունն են նրա անդամների պարտադիր և կամավոր վճարներից ձևավորված կանոնադրական հիմնադրամի միջոցները: Դրանց դիմաց շահաբաժիններ չեն

վճարվում. այս միջոցները կարող են հետ ստացվել ակումբից դուրս գալու դեպքում միայն:

Ակումբի անբաժանելի սեփականությունն են փոփոխությունների վերականգնման պահուստի միջոցները, ֆինանսական փոխադարձ օգնության պահուստի միջոցները և դրամաշնորհներից ձևավորվող պահուստի միջոցները: Այս միջոցների նկատմամբ ակումբի անդամը կորցնում է սեփականության իրավունքը ակումբից դուրս գալու դեպքում:

Ակումբի անբաժանելի միջոցներն անդամների միջև չեն բաժանվում (հոդված 4), այլ տնօրինվում ու օգտագործվում են ակումբի անդամների ընդհանուր որոշմամբ և կարող են բաժանվել միայն ակումբի լուծարման դեպքում, լուծարման պահին առկա անդամների միջև՝ բաժնային սեփականության մեջ նրանցից յուրաքանչյուրի բաժնեմասին համապատասխանող հարաբերակցությամբ:

Ակումբը փոխառու միջոցներ չի կարող ներգրավել ոչ անդամներից և փոխառու միջոցներ տրամադրել ակումբի ոչ անդամներին: Ակումբը ստեղծվում է տնտեսական շահերով միավորված միևնույն համայնքում կամ իրենց տարածքներով հարակից համայնքներում՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող 10-ից ոչ պակաս անձանց հիմնադիր ժողովի որոշմամբ:

Օրենքում անդամակցության հարցերը բավականին հստակ են շարադրված: Ակումբի խորհրդում և վերստուգիչ հանձնաժողովում կարող են ընդգրկվել միայն ակումբի անդամները: Որոշումներ կայացնելիս ակումբի անդամները ունեն 1 ձայնի իրավունք:

5. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է պետական գրանցման (այդ թվում՝ կոոպերատիվների) և պետական հաշվառման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանում է պետական գրանցման և պետական հաշվառման վարչական վարույթների առանձնահատկությունները, պետական գրանցումը և պետական հաշվառումն իրականացնող մարմնի իրավասությունը, պետական միասնական

գրանցամատյանում պահպանվող տեղեկատվության ծավալը և տեղեկատվության տրամադրման պայմաններն ու կարգը: Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Կոոպերատիվների համար ի հավելումն Իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառման ենթակա տվյալների, գրառվում է նաև անբաժանելի ֆոնդի չափը:

**6. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011թ. մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրությամբ (ՆԿ-91-Ն) հաստատված հայեցակարգի 15-րդ «Ագրոպարենային համակարգի զարգացման ապահովման հիմնական միջոցառումներից են՝**

8) կոոպերատիվների, ընկերությունների, ընկերակցությունների և այլ միավորումների ստեղծումը և ապրանքային տնտեսությունների ձևավորումը»:

**7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշման հավելվածի 2.14 կետով նախատեսված է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և գործունեության իրականացման խթանում» միջոցառումը, որի ակնկալվող արդյունք է սահմանված բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը, տնտեսավարողների գործունեության պայմանների բարելավումը, գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացումը:**

**8. Գյուղատնտեսական կոոպերատիվների բնագավառում պետական քաղաքականության դրույթներ է պարունակում «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը»<sup>7</sup>:**

Ռազմավարության «Գյուղատնտեսության զարգացման տեսլականը» II բաժնի 36-րդ կետի 1-ին ենթակետում ամրագրված է հետևյալ դրույթը՝ «Ագրարային

<sup>7</sup> ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն որոշում

բարեփոխումների և տնտեսության շուկայական կողմնորոշման հետևողական խորացման և ագրարային հատվածի առանձնահատկություններով պայմանավորված՝ պետական աջակցության արդյունքում գյուղի և գյուղատնտեսության զարգացման տեսլականն է.

1) ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացում»:

Ռազմավարության հիմնական խնդիրների (IV բաժին) շարքում առանձնանում է «Ագրարային բարեփոխումների խորացում, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում»:

«Ռազմավարության հիմնական ուղղությունները» V-րդ բաժնի 42-րդ կետում ամրագրված է հետևյալ դրույթները՝

**«Գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացման համատեքստում միջոցառումները կնպաստակառուղվեն գյուղատնտեսությունում կոոպերացիայի տարբեր ձևերի խթանմանը, որը իրականացվելու է հետևյալ ուղղություններով.**

- գյուղատնտեսության ոլորտի տարբեր ուղղվածություն ունեցող կոոպերատիվների համար օրենսդրության բարելավմամբ՝ դրանց ձևավորման և գործունեության բարենպաստ պայմանների ստեղծում.
- կոոպերատիվների կայացմանը և գործունեության ընդլայնմանն ուղղված բազմակողմանի պետական աջակցություն.
- գյուղացիական տնտեսությունների խոշորացման հետևողական քաղաքականության հիմքում կոոպերացիայի զարգացման ամրագրում.
- գյուղատնտեսական մթերքների արտադրությունից մինչև սպառումը ապրանքային շարժին նպաստող կառույցների, մասնավորապես, գյուղատնտեսական հետբերքահավաքային ենթակառուցվածքների, արտադրանքների իրացման լոգիստիկ համակարգի՝ պահպանման, վերամշակման, փաթեթավորման և փոխադրման կարողությունների ձևավորմանը, հանրապետության մեծ քաղաքներում հանգստյան օրերի գյուղատնտեսական տոնավաճառների կազմակերպմանը, բոլոր մարզերի և

տարածաշրջանների ընդգրկումով մեծածախ վաճառքի համակարգի ստեղծման նպատակով կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացմանն աջակցություն.

- կաթի հավաքման կետերի և սպառողական կոոպերատիվների համակարգի ընդլայնման աջակցություն, կաթնամթերքների արտադրության մեջ թարմ և վերամշակված կաթի օգտագործման կարգավորում, սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխան պահպանման, տեսակավորման, փաթեթավորման և վաճառքի կանոնակարգում.
- գյուղատնտեսական արտադրանքների, հատկապես՝ թարմ մրգերի և բանջարեղենների միջնորդավորված վաճառքի սահմանափակում, կոոպերացիայի զարգացման միջոցով մանրածախ առևտրի օբյեկտներին մատակարարվող ապրանքների մեծածախ հավաքման կետերի ստեղծում, դրանց կարողությունների ընդլայնում, հատկապես՝ պահպանման, տեսակավորման, փաթեթավորման և փոխադրման միջոցներով վերազինման աջակցություն.»:

ՀՀ կառավարության 2010թ. N1476-Ն որոշման N2 հավելվածով հաստատված «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ցանկի» մի շարք միջոցառումներ միտված են գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը, մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանն ու գործունեությանը խթանում (1-ին միջոցառում), (նպատակը՝ Հանրապետությունում գյուղատնտեսական տարբեր ուղղվածություն ունեցող կոոպերատիվների ձևավորման խթանում և գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում).
- «Սպառողական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում (2-րդ միջոցառում), (նպատակը՝ սպառողական կոոպերատիվների ձևավորման համար անդամների պարտադիր թվի նվազեցման միջոցով գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների ձևավորման գործընթացի խթանում).

- «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում (3-րդ միջոցառում), (նպատակը՝ համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն իրականացնող բոլոր ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ ԱԱՀ-ի գործող շեմի տարածման միջոցով գյուղատնտեսությունում համատեղ գործունեության խթանում)։
- «Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգի» մշակում և ընդունում (4-րդ միջոցառում), (նպատակը՝ գյուղացիական տնտեսությունների խոշորացման գործընթացը սահմանափակող գործոնների և առկա խնդիրների բացահայտման հիման վրա դրանց լուծման պետական քաղաքականության ուղղությունների և մեխանիզմների բացահայտում)։
- Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի աստիճանաբար նորացման միջոցառումների իրականացում՝ կոոպերացման բաժնետիրացման սկզբունքով գործող արտադրատեխնիկական ծառայությունների խթանում (37-րդ միջոցառում), (նպատակը՝ տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում)։
- Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի նախապատրաստում և իրականացում (վարկային ծրագիր) (40-րդ միջոցառում), (նպատակը՝ գյուղական համայնքների առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու կառավարման միջոցով անասնապահության ճյուղի արդյունավետության ու մրցունակության բարձրացում, անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացում)։
- «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում (47-րդ միջոցառում), (նպատակը՝ համատեղ գործունեության պայմանագրի մասնակից չհանդիսացող գյուղատնտեսական արտադրանք արտադրող քաղաքացիների կողմից առանց պետական գրանցման

գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվելու իրավունքի կանոնակարգում):

9. Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման դրույթներ պարունակում են ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N43 արձանագրային որոշման դրույթները:

Նշված հայեցակարգի «Գյուղացիական տնտեսությունների խոշորացումը գյուղատնտեսական կոոպերացիայի և տնտեսավարման այլ ձևերի խթանման միջոցով» V բաժինը ամրագրում է հետևյալը՝

«Գյուղացիական տնտեսությունների միջև համագործակցության, տնտեսավարման արդյունավետ ձևերի կիրառումն օբյեկտիվ պահանջ է: Այդ տեսանկյունից գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը ագրարային քաղաքականության և գյուղացիական տնտեսությունների խոշորացման հիմնական ուղղություններից է:

Գյուղատնտեսական կոոպերատիվները ստեղծվում են Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կամավոր անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային, դրամական և այլ տեսակի փայերի (փայավճարների) միավորման միջոցով՝ մասնակիցների նյութական և այլ կարիքներն առավել արդյունավետ բավարարման նպատակով:

Կոոպերատիվների կազմակերպման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ սկզբունքները.

- 1) կոոպերատիվում անդամության կամավորությունը.
- 2) կոոպերատիվի անդամների փոխօգնության և տնտեսական գործունեությանն արդյունավետ մասնակցությունը.
- 3) կոոպերատիվի կառավարմանը ժողովրդավարական հիմունքներով մասնակցությունը.
- 4) կոոպերատիվի անդամների տնտեսական ինքնուրույնության ապահովումը.

5) գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման և համայնքների (բնակավայրերի) կայուն զարգացմանը նպաստելը:

Գյուղատնտեսական կոոպերացիան ներառում է կոոպերատիվների բազմաբնույթ ձևերը (տեսակները), որոնք կարող են դասակարգվել ըստ հիմնական գործունեության, մասնավորապես՝ սպառողական, արտադրական, վերամշակող, իրացնող, նյութատեխնիկական մատակարարման, սպասարկումներ իրականացնող, վարկային, այգեգործական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մասնագիտացված գործունեություն իրականացնող կոոպերատիվներ:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացումը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման գործընթացի խթանմամբ: Ներկայումս այդ բնագավառում առկա են մի շարք լուծում պահանջող խնդիրներ, մասնավորապես.

1) գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման և այդ ուղղությամբ մրցունակ, մատչելի ծառայությունների ձևավորման ու զարգացման բնագավառում պետություն-մասնավոր հատվածի ոչ լիարժեք համագործակցությունը.

2) ագրոպարենային համակարգում արդիական տեխնոլոգիաների, արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերի ներդրմանն ուղղված խորհրդատվական և տեղեկատվական համակարգերի անկատարությունը.

3) կոոպերատիվների ստեղծման համար բարենպաստ իրավական և տնտեսական դաշտի ձևավորման դանդաղ ընթացքը.

4) գյուղատնտեսությունում ապահովագրական գործուն համակարգի ներդրման համար պետական աջակցության բացակայությունը.

5) պետական աջակցության ընդլայնման, ինչպես նաև կիրառվող մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը.

6) գյուղատնտեսական մթերքի իրացման, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության բնագավառներում ինստիտուցիոնալ կառույցների և արտադրական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը.



7) հողային, ջրային, աշխատանքային ռեսուրսների օգտագործման և կառավարման դեռևս ցածր արդյունավետությունը»:

Նշված հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցի 5-րդ կետով սահմանվում է հետևյալ միջոցառումը՝

«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը և զարգացմանն ուղղված աջակցության ընդլայնում», (ակնկալվող արդյունքն է՝ կիրականացվեն գյուղատնտեսական կոոպերացիայի, մասնավորապես պայմանագրային հիմունքներով կոոպերացիայի խթանման կոնկրետ միջոցառումներ (ծրագրեր), որոնց արդյունքում կխոշորանան ներկայիս գյուղացիական տնտեսությունները ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնում կատեղծվի կոոպերացիայի զարգացման հարցերով զբաղվող ստորաբաժանում, ինչպես նաև «Գյուղատնտեսական կոոպերացիայի աջակցման կենտրոն» հիմնադրամ):

Հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցի 6-րդ կետով սահմանվում է հետևյալ միջոցառումը՝

«Գյուղատնտեսական կոոպերացիայի կամ տնտեսավարման կազմակերպչա-իրավական այլ ձևերի խթանման, ինչպես նաև հողամասերի միավորման (կոնսոլիդացման) փորձնական (պիլոտային) ծրագրերի իրականացում», (ակնկալվող արդյունքն է՝ փորձնական ծրագրերի իրականացումը հնարավորություն կընձեռի բացահայտել առաջարկվող հայեցակարգային մոտեցումների ներդրման (կիրարկման) արդյունավետությունը, ինչպես նաև գործնականում թույլ տրված թերությունները և բացթողումները, ինչը հիմք կհանդիսանա նշված գործընթացների հետագա տարածման համար: Փորձնական ծրագրերը կիրականացվեն հանրության պատշաճ իրազեկմամբ):

**10.** Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 10-Ն որոշման հավելված 2-ում որպես գերակա խնդիր նախատեսված է Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, իսկ որպես դրա լուծմանն ուղղված միջոցառում նախատեսված է Կոոպերատիվների

ձևավորման փորձական ծրագրերի իրականացումը, որը հնարավորություն կընձեռնի գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի կատարելագործման, արտադրության և գյուղատնտեսության սպասարկման առավել արդյունավետ կազմակերպման համար: Վերը նշված հավելված 2-ում որպես մեկ այլ գերակա խնդիր նախատեսված է Անասնապահության մասնագիտացում ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներին աջակցության շարունակում իսկ որպես դրա լուծման համար անհրաժեշտ միջոցառում նախատեսված է նաև Հանրապետության մարզերի համայնքներում ստեղծված արոսոգտագործողների սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման միջոցառումների իրականացումը:

## ՑԱՆԿ

### Կոոպերատիվների գործունեության հետ առնչվող իրավական ակտերի

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (ՀՕ-239).
2. «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-91).
3. «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-374-Ն).
4. «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-332).
5. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-169).
6. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011թ. մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրությունը (ՆԿ-91-Ն).
7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշումը.
8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. նոյեմբերի 6-ի «Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիների կողմից կնքվող համատեղ գործունեության պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N1270-Ն որոշումը.
9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության

կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N1476-Ն որոշումը.

10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N43 արձանագրային որոշումը,

11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 10-Ն որոշումը:

**Բ. ՇԵՇՏԸ ԴՆԵԼՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎՐԱ ԴՐԱՆՑ ՈՒՏԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հիմք ունենալով գյուղատնտեսական կոոպերացիային առնչվող իրավական ակտերի դրույթների ուսումնասիրությունը գնահատվել է գործող իրավական ակտերի ուժեղ և թույլ կողմերը:

Նախ անդրադառնանք իրավական ակտերի **ուժեղ կողմերին** որոնք են՝

1. Ներկայումս Հայաստանի հանրապետությունում գործում են տարբեր իրավական ակտեր (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան պարագրաֆ և առանձին հոդվածներ, սպառողական կոոպերացիայի ոլորտը կարգավորող առանձին օրենք, ջրօգտագործողների ընկերությունների և վարկային ակումբների գործունեության հարաբերությունները կարգավորող օրենքներ, ռազմավարական փաստաթղթերի առկայություն, որոնք հստակեցնում են գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում քաղաքականության հիմնական ուղղությունները) որոնք որոշակիորեն կարգավորում են գյուղատնտեսության կոոպերացիայի գործունեության հարաբերությունները: Մասնավորապես՝
  - 1) օրենսդրությամբ տրվում է կոոպերատիվի սահմանումը.
  - 2) օրենսդրությամբ սահմանված է, որ կոոպերատիվների կանոնադրությունը պետք է պայմաններ պարունակի կոոպերատիվի անդամների փայավճարների չափի, դրանք վճարելու կարգի և այդ պարտավորությունը խախտելու համար կոոպերատիվի անդամների պատասխանատվության, կոոպերատիվի կառավարման մարմինների կազմի, իրավասության ու նրանց որոշումների ընդունման՝ ներառյալ այն հարցերով, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ, կոոպերատիվի անդամների կողմից կոոպերատիվի կրած վնասները հատուցելու կարգի մասին.
  - 3) գործող օրենսդրությամբ կոոպերատիվի անվանումը պետք է ցուցում պարունակի նրա գործունեության հիմնական նպատակի մասին, ինչպես նաև ներառի «կոոպերատիվ» բառը.

- 4) օրենսդրությունը սահմանում է, որ կոոպերատիվների առանձին տեսակների, առանձնահատկությունները և իրավական վիճակը, ինչպես նաև նրանց անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, մեր պայմաններում դա վերաբերում է «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և «Համատիրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին.
- 5) օրենսդրությամբ սահմանվում է կոոպերատիվի գույքի կառավարման հարաբերությունները, մասնավորապես՝ կոոպերատիվի գույքի նրա անդամների փայերի բաժանման, փայավճարների մուծմանը, ամբողջական ֆոնդերի ձևավորմանը, դրանց օգտագործմանը, կոոպերատիվների անդամների համապարտ սուբսիդար պատասխանատվությանը, կոոպերատիվի լուծարումից հետո մնացած գույքի բաշխմանը և այլն.
- 6) օրենսդրությամբ սահմանվում է կոոպերատիվի կառավարման հարաբերությունները, մասնավորապես, կոոպերատիվների կառավարման բարձրագույն և գործադիր մարմիններն, կառավարման մարմինների և նրանց որոշումների ընդունման կարգն և այլն.
- 7) առկա օրենսդրությամբ սահմանված է կոոպերատիվի անդամության դադարման և փայի անցման հարաբերությունները, կոոպերատիվի անդամի, կոոպերատիվի կանոնադրությամբ իր վրա դրված պարտավորությունները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ այլ դեպքերում կոոպերատիվից հեռացման պայմանները, կոոպերատիվի անդամի փայը այլ անդամների հանձնելու իրավունքի, կոոպերատիվի անդամների ժառանգության, կոոպերատիվի անդամի փայի վրա բռնագանձում տարածելու պայմանները.
- 8) օրենսդրությամբ նախատեսված է կոոպերատիվի պետական գրանցում, որի ուժով պետությունը ճանաչում է կոոպերատիվին որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ.
- 9) օրենսդրությունը սահմանում է կոոպերատիվների վերակազմավորման և լուծարման հարաբերությունները.

- 10) ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հնարավորություն է տալիս առանց իրավաբանական անձ ձևավորելու վարել համատեղ գյուղատնտեսական գործունեություն: Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ են հանդիսանում միայն տվյալ համատեղ գործունեության պայմանագրի սահմաններում: Օրենսդրությունը սահմանում է համատեղ գործունեության պայմանագրի առանձնահատկությունները: Համատեղ գործունեության պայմանագրի օրինակելի ձևը սահմանված է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ գործունեության պայմանագրով գործող գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող սուբյեկտներից (մասնակիցներից) յուրաքանչյուրը հանդես են գալիս որպես առանձին հարկ վճարող:
- 11) ՀՀ օրենսդրությամբ («Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքով) սահմանված է սպառողական կոոպերացիայի կազմակերպական-իրավական հիմունքները, սպառողական կոոպերացիայի ձևավորման (ստեղծման) գործունեության կարգն ու պայմանները, ինչպես նաև պետական մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների սկզբունքները:
- 12) օրենսդրությամբ սահմանված է սպառողական կոոպերատիվը, գործող օրենսդրությամբ նվազեցվել է սպառողական կոոպերատիվների անդամների նվազագույն թիվը:
- 13) օրենսդրությամբ հստակեցված է սպառողական կոոպերատիվների գործունեության շրջանակը:
- 14) օրենսդրորեն սահմանված է սպառողական կոոպերատիվի անդամության լայն շրջանակ՝ սպառողական կոոպերատիվի մասնակիցներ (անդամներ) կարող են լինել քաղաքացիները և (կամ) համատեղ գործունեության պայմանագիր կնքած անհատ ձեռնարկատերերն ու գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները:
- 15) օրենսդրորեն սահմանված է սպառողական կոոպերատիվների միության կազմակերպությունը, միության մասնակիցների իրավունքները, միության բարձրագույն

մարմինը և դրա իրավասությունների շրջանակը, միության ներկայացուցիչների ընդհանուր ժողովում մասնակիցների ներկայացման կարգը, ընդհանուր ժողովում որոշումների ընդունման կարգը, միության գործունեության դադարման պայմանները, միության գործադիր և վերահսկիչ մարմինները.

16) օրենսդրությամբ սահմանված է սպառողական կոոպերատիվների և սպառողական կոոպերատիվների միությունների ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, որը ընդգրկում է սպառողական կոոպերատիվների իրավունքների և շահերի պաշտպանության, սպառողական կոոպերատիվների գործունեության անկախության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կոոպերատիվների գործունեությանն միջամտման արգելման, անօրինական միջամտության հետևանքով սպառողական կոոպերատիվին հասցված վնասի փոխհատուցման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և սպառողական կոոպերատիվի պարտավորությունների համար երկուստեք պարտավորություններ չկրելու և այլ դրույթներ:

17) օրենսդրությունը սահմանում է սպառողական կոոպերատիվի պետական գրանցման հետ կապված հարաբերությունները,

18) կոոպերատիվների ինքնությանը վերաբերող էլեմենտներ կան նաև մի շարք այլ օրենքներում, մասնավորապես «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը, «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքը: Վերջինս հստակ նշվում է, որ ակումբի անդամներին մատուցվող ֆինանսական փոխադարձ օգնության ծառայություններն ու սպասարկումները չեն հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության առարկա և իրականացվում են բոլոր անձանց անունից և նրանց սուբսիդիար ռիսկով: «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքում տեղ են գտել մի շարք դրույթներ, որոնք համապատասխանում են Կոոպերատիվների Միջազգային դաշնության դրույթներին: Օրինակ, ակումբի սեփական միջոցները ստորադասվում են 2



մասի՝ **բաժանելի սեփականության** և **համատեղ**՝ անբաժանելի սեփականության: Ակումբի բաժանելի սեփականությունն են նրա անդամների պարտադիր և կամավոր վճարներից ձևավորված կանոնադրական հիմնադրամի միջոցները: Դրանց դիմաց շահաբաժիններ չեն վճարվում: Այս միջոցները կարող են հետ ստացվել ակումբից դուրս գալու դեպքում միայն: Ակումբի անբաժանելի սեփականությունն են փոփոխությունների վերականգնման պահուստի միջոցները, ֆինանսական փոխադարձ օգնության պահուստի միջոցները և դրամաշնորհներից ձևավորվող պահուստի միջոցները: Այս միջոցների նկատմամբ ակումբի անդամը կորցնում է սեփականության իրավունքը ակումբից դուրս գալու դեպքում:

Իրավական ակտերի **թույլ կողմերն** են՝

- 1) Հայաստանի Հանրապետությունը չունի կոոպերատիվների կամ առանձին գյուղատնտեսական կոոպերատիվների մեկ միասնական առանձին օրենք.
- 2) կոոպերատիվների բնագավառը կարգավորող օրենքների վերլուծելով՝ պարզ է դառնում, որ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և վերը նշված կոոպերատիվների առանձին տեսակների օրենքների, կոոպերատիվները Հայաստանում կարող են լինել **առևտրային**, որի մեջ մտնում են նաև **արտադրական կոոպերատիվները**, որոնք ըստ ՀՀ օրենսդրության կարող են լինել շահույթի նպատակ հետապնդող, և շահույթի նպատակ չհետապնդող՝ **ոչ առևտրային** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51.3 հոդված): Գործող օրենքները չեն համապատասխանում Կոոպերացիայի միջազգային դաշնության և Աշխատանքի միջազգային կազմակերպության 2002թ. ընդունած «Կոոպերատիվների աջակցության» (թիվ 193) առաջարկության դրույթներին.
- 3) ըստ Կոոպերատիվների միջազգային դաշնության «Կոոպերատիվների ինքնության հռչակագրի». «Կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերակցություն է, որոնք կամավոր կերպով միավորվում են՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար»:

Կոոպերատիվների այս սահմանումը չպետք է ընդունել որպես միայն սահմանում: Սահմանումը պետք է ուղեցույց լինի կոոպերատիվների բնագավառը կարգավորող օրենքների համար, որը ներկայում գործող օրենսդրությունում կիրառություն չունի.

- 4) «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունից պարզ է դառնում, որ կոոպերատիվների գործունեության բազմաթիվ օրենսդրական էլեմենտներ պետք է իրենց կարգավորումը ստանան կոոպերատիվների կանոնադրություններում, քանի որ նշված օրենքները լիարժեք չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն: Ավելին, «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի դրույթները չեն համապատասխանում սպառողական կոոպերատիվների մասին միջազգայնորեն ընդունված պատկերացումներին և սկզբունքներին: Միջազգայնորեն ընդունված չափանիշներով սպառողական կոոպերատիվները մատակարարման կոոպերատիվների յուրահատուկ տեսակ են: Որոշ դեպքերում այս կոոպերատիվները զբաղվում են մանրածախ և մեծածախ վաճառքով միայն, այսինքն իրականացնում են տնտեսական և առևտրային ձեռնարկներ: Այս կոոպերատիվների հիմնական նպատակը ֆերմերների կողմից գնումներ կատարելու գործընթացում խնայողությունների ապահովումն է,
- 5) հաշվի առնելով այն, որ կոոպերատիվի կանոնադրությունը, ըստ էության, կոոպերատիվների մասին օրենքից բխող դրույթներն են կոնկրետ կոոպերատիվի դեպքում, ուստի, չունենալով նորմալ, բովանդակալից օրենսդրական դրույթներ կոոպերատիվների օրենքներում՝ հնարավոր չէ ունենալ լիարժեք կանոնադրություն, որը պետք է լինի կոոպերատիվների ներքին օրենսդրությունը: Կոնկրետ Հայաստանի պարագայում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կոոպերատիվների հիմնական մասը, թե՛ արտադրական, թե՛ սպառողական ընդունել են «օրինակելի» կանոնադրություն՝ առանց քննարկելու կամ որոշելու, թե արդյոք տվյալ նմուշն առհասարակ պետք է իրենց կոոպերատիվին.

- 6) սպառողական և արտադրական կոոպերատիվների որոշ կանոնադրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվների կանոնադրությունները նույնպես չեն արտացոլում կոոպերատիվների սկզբունքներն ու արժեքային համակարգը, ավելին, արտադրական կոոպերատիվների դեպքում, նույնիսկ հակասում են միջազգայնորեն ընդունված արտադրական կոոպերատիվների սահմանմանը և գործունեության ընդհանուր առանձնահատկություններին: Հայաստանում կոոպերատիվները գրանցվելիս հիմնականում օգտվում են կանոնադրության նմուշներից, որոնք, որպես կանոն, նույնանման բովանդակությամբ տեղայնացվում են կոնկրետ կոոպերատիվի դեպքում: Թե՛ սպառողական, թե՛ արտադրական կոոպերատիվների պարագայում նրանց կանոնադրությունները նույնանման են.
- 7) սակայն, այս ամենի հետ մեկ տեղ, արտադրական կոոպերատիվը, համաձայն իր կանոնադրության, կոոպերատիվի ինքնության որոշ էլեմենտներ է պարունակում, երբեմն ավելի շատ, քան սպառողական կոոպերատիվը: Օրինակ, արտադրական կոոպերատիվը կարող է սահմանել անբաժանելի ֆոնդ ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ, իր շահույթից կատարած մասհանումներից կարող է ստեղծել պահուստային, կուտակման և այլ ֆոնդեր, հստակ սահմանված է փայամասնակցային ֆոնդը և յուրաքանչյուր անդամի փայաբաժինը և այլն.
- 8) վերլուծությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվների օրենսդրական բազմաթիվ ուսումնասիրված հիմնական տարրերի մեծ մասի կարգավորումը առկա չէ կոոպերատիվների կանոնադրություններում, հետևաբար դրանք իրենց մեկնաբանությունը պետք է ունենան կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրությունում, այդ հիմնականում վերաբերում է հետևյալին՝
- սահմանումը և նպատակը,
  - տնտեսական գործունեության սահմանափակումները,
  - գործունեությունը ոչ անդամների հետ,
  - գրանցումը,
  - անդամների նվազագույն թիվը,
  - ներդրում կատարած անդամները,

- նոր անդամների ընդունումը,
- նվազագույն կապիտալի պահանջարկը,
- շահաբաժինների տարբերակումը և բաշխումը գործունեության հիման վրա և գործունեության համամասնությամբ,
- ձայնի իրավունքը,
- կառավարման կամ վարչական մարմինները,
- լուծարման դեպքում ակտիվների փոխանցումը,
- ընկերության կամ կազմակերպության իրավաբանական անձի այլ ձևի փոխարկումը,
- հարկային հատուկ մոտեցումը,
- վերահսկման (աուդիտի) պետական/կամ այլ ձևերը, ներառյալ՝ կոոպերատիվներին բնորոշ նախազգուշական և ոչ թե զուտ ֆինանսական վերահսկողությունը,

9) Հանրապետությունում ներկայումս գործող օրենսդրությունը, հատկապես գյուղատնտեսական կոոպերատիվների համար ավելացված արժեքի հարկի նվազագույն հարկվող շեմի հաշվարկման մեխանիզմները չեն նպաստում կոոպերացիայի զարգացմանը:

Կոոպերատիվների օրենսդրության վերը նշված թույլ կողմերի վերացման հնարավորությունները պայմանավորում են այդ բնագավառի օրենսդրության կատարելագործման քայլերը, որոնցից կարող են լինել գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացման բնագավառի քաղաքականության հիմնական ուղղությունների հստակեցումը և գյուղատնտեսական կոոպերացիայի մասին առանձին օրենքի նախագծի մշակումը և ընդունումը:

Գ. ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱ-  
ԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՌՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱ-  
ՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (ՇԵՇՏԸ ԴՆԵԼՈՎ  
ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՎՐԱ): ՏՎՅԱԼ  
ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ (ՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ) ՀԵՏՈ  
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գյուղատնտեսական կոոպե-  
րացիայի բնագավառը կարգավորվող շրջանառվող նախագծերից է «Հայաստանի  
հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման» հայեցա-  
կարգի նախագիծը: Վերջինս սահմանված կարգով քննարկվել է պետական  
կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների կողմից:  
Եզրափակիչ քննարկումն անցել է ՀՀ կառավարության ֆինանսատնտեսական  
նախարարական կոմիտեում:

Հայեցակարգի նախագիծը ընդգրկում է հետևյալ կառուցվածքային մասերը՝

- 1) Նախաբան.
- 2) Ընդհանուր դրույթներ.
- 3) Հիմնական նպատակը և խնդիրները.
- 4) Կոոպերացիայի էությունը և սկզբունքները.
- 5) Կոոպերատիվներ և կոոպերատիվների միություններ.
- 6) Գյուղատնտեսական կոոպերացիային խոչընդոտող գործոնները և դրանց  
հաղթահարման հնարավորությունները.
- 7) Գյուղատնտեսական կոոպերացիայի օրենսդրական հիմքերի կատա-  
րելագործումը.
- 8) Կոոպերացիայի զարգացմանն ուղղված պետական աջակցությունը.
- 9) Հայեցակարգի իրականացումից ակնկալվող արդյունքները:

Նախագծի **նախաբանի** մասում շեշտադրվում է, որ վերջին տարիներին  
գյուղատնտեսությունում տնտեսավարողների ջանքերով և ոլորտում իրականացված  
պետական ծրագրերի արդյունքում գրանցվել են էական դրական տեղաշարժեր:  
Նշվածի հետ մեկտեղ գյուղատնտեսության բնատնտեսական ներուժի օգտագործման  
մակարդակը դեռևս բավականին ցածր է, որի հիմնական պատճառներից են հանրա-  
պետության գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, գյուղատնտեսական

արտադրության ցածր եկամտաբերությունը և կոռպերացիայի զարգացման դանդաղ ընթացքը:

Կոռպերացիայի փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մասնավոր հատվածի արտադրողների (հատկապես մանր և միջին) հնարավորություններն առավելագույնս արդյունավետ օգտագործվում են կամավորության սկզբունքներով միավորման և համատեղ արտադրատնտեսական գործունեության իրականացման դեպքում: Տվյալ դեպքում կարևորվում են կոռպերատիվների տարբեր ձևերը, որոնք հնարավորություն է ընձեռում դրանցում ընդգրկված յուրաքանչյուր անդամին առավելագույնս օգտագործել տնտեսական ներուժը և վերարտադրության տարբեր փուլերում ապահովել անհամեմատ բարձր եկամուտների ստացում:

Հայեցակարգի նախագծով նշվում է, որ կոռպերատիվների տարբեր ձևերի մեջ առանձնակի տեղ են զբաղում գյուղատնտեսական կոռպերատիվները, որոնց սկզբունքների արդյունավետ կիրառումն ու օգտագործումը կարող է վճռորոշ դեր խաղալ հանրապետության ներկա ագրարային խնդիրների հանգուցալուծման և գյուղատնտեսության հետագա զարգացման գործում:

**Հանրապետության գյուղատնտեսությունում կոռպերացիայի զարգացման նպատակն է կոռպերատիվների տարբեր ձևերի ստեղծման և գործունեության խթանման միջոցով արտադրության և սպառման բնագավառի խնդիրների արդյունավետ լուծումը, արտադրության արդյունավետության բարձրացումը և կոռպերատիվի անդամների եկամուտների ավելացումը:**

Նախագծի նախաբանի մասում նախանշվում է, որ հայեցակարգի ընդունումը կնպաստի կոռպերատիվների զարգացմանն ուղղված քաղաքականության հստակեցմանը, օրենսդրական հիմքերի և, ընդհանուր առմամբ, կոռպերատիվների զարգացման նպաստավոր միջավայրի ձևավորմանը: Նախագիծը բխում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունից, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրից ու Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից:

Նախագծի **ընդհանուր դրույթներ** բաժնում մասնավորապես նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում նախորդ դարի 90-ական թվականների սկզբին իրականացված հողի, անասնազվաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրական այլ միջոցների մասնավորեցման (սեփականաշնորհման) արդյունքում ձևավորվել և ներկայումս գործում են շուրջ 340 հազար ընտանեկան՝ գյուղացիական տնտեսություններ: Դրանց, միջին հաշվով, բաժին է ընկնում շուրջ 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում 1.1 հա՝ վարելահողեր: Ըստ Հանրապետության մարզերի գյուղացիական տնտեսությունների չափերը տատանվում են 0.6-3.1 հա-ի սահմաններում:

Ներկայումս Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում բուսաբուծություն վարվում է 1.2 մլն մասնատված հողակտորների վրա: Ստեղծված պայմաններում գյուղացիական տնտեսություններին բաժին է ընկնում գյուղատնտեսության համախառն արդյունքի շուրջ 97.0 տոկոսը: Վերջինս վկայում է տնտեսավարման այլ ձևերով, մասնավորապես՝ կոոպերացման սկզբունքով գործող տնտեսավարողների գործունեության սահմանափակությունը: Փաստորեն, գյուղատնտեսությունում գերակշռում են ապրանքայնության և մրցունակության ցածր մակարդակ ունեցող գյուղացիական ընտանեկան տնտեսությունները:

Գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն ու դրանց առանձնացվածությունը, հողաբաժինների կտրտվածությունն ու փոքրությունը, հողի շուկայի դեռևս դանդաղ ձևավորումը, գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման հետ կապված դժվարությունները հնարավորություն չեն տալիս վարել արդյունավետ գյուղատնտեսական արտադրություն: Ըստ հայեցակարգի նախագծի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում **ընդհանուր առմամբ տնտեսավարողների առջև ծառայած խնդիրներն են՝**

- հողային ռեսուրսների, մասնավորապես՝ վարելահողերի նպատակային օգտագործման ցածր մակարդակը, որի հետևանքով հնարավոր չէ կիրառել համապատասխան ցանքաշրջանառություն և պահանջվող ագրոտեխնիկական միջոցառումներ.

- գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության անբավարարությունը, տեխնիկական հավաքակազմը վերջին երկու տասնամյակում համալրվել է չափազանց փոքր քանակներով, առկա տեխնիկան չի բավարարում գյուղացիական տնտեսությունների տեխնիկայի նկատմամբ պահանջարկը՝ այն ֆիզիկապես մաշված է և բացասաբար է անդրադառնում մեքենայական ագրեգատների արտադրողականության, հետևաբար՝ շահագործական ծախսերի և սպասարկումների սակագների վրա.
- ձեռքի աշխատանքի բարձր տեսակարար կշիռը և արտադրության ինտենսիվացման ցածր մակարդակը.
- նյութատեխնիկական միջոցների անբավարար մատակարարումները և սպասարկումները.
- գյուղատնտեսական հումքի և մթերքների իրացման ու վերամշակման բնագավառում առկա խոչընդոտները.
- գյուղատնտեսական մթերքների իրացումը ներքին շուկայում խոչընդոտվում է հանրապետության բնակչության վճարունակության ցածր մակարդակով, դժվարություններ կան նաև մթերքների արտահանման բնագավառում.
- ագրարային ոլորտում առկա շրջանառու ակտիվների պակասը:

Հայեցակարգի նախագծով ընդհանրացում է արվում այն մասին, որ գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի պայմաններում գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ցածր մակարդակի, ագրոտեխնիկական և գոտտեխնիկական կանոնների պահանջների թերի կատարման, մատչելի փոխառու (վարկային) միջոցների սղության, գյուղատնտեսական արտադրությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման դանդաղ տեմպերի և մի շարք այլ գործոններով պայմանավորված՝ աշխատանքի արտադրողականությունն ոլորտում շարունակում է մնալ ցածր և գյուղացիական տնտեսությունների եկամուտները չեն ապահովում գյուղական ընտանիքների կյանքի բավարար որակ:

Ըստ հայեցակարգի նախագծի՝ գյուղական աղքատության բարձր մակարդակը, և դրա աճի միտումները պահանջում են գյուղական բնակավայրերում եկամուտների



ավելացմանն ուղղված քայլերի ձեռնարկում, որի կարևորագույն ուղղություններից մեկն է համարվում գյուղատնտեսությունում կոոպերատիվների զարգացումը:

Նշվածի հետ մեկտեղ, Հանրապետության գյուղատնտեսությունում դանդաղ են ընթանում կոոպերացման գործընթացները, գյուղացիներն աշխատում են մասնատված, դժվարությամբ են ձևավորվում նրանց խնդիրների համատեղ լուծման նպատակով միավորվող կառույցները, վերջիններս բացասաբար են ազդում արդյունավետ ապրանքային արտադրության կազմակերպման գործընթացի վրա.

Հայեցակարգի նախագծով անդրադարձ է կատարվում կոոպերատիվների ձևավորման գործում միջազգային կազմակերպությունների և վարկային ծրագրերի աջակցությանը, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագիրը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը, «ԱՄՔՈՐ»-ը, «ՕՔՄՖԱՄ»-ը և այլ կազմակերպությունները: Մատնանշվում է նաև <<Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միության կարևորությունը Հանրապետությունում կոոպերատիվ շարժման գործում:

**Որպես Հայեցակարգի հիմնական նպատակ՝** նշված է հետևյալը. «Բացահայտելով գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացման գործընթացի խոչընդոտները, նախանշել դրանց հաղթահարման ուղիները և կոոպերատիվների տարբեր ձևերի ստեղծման ու գործունեության խթանման միջոցով նպաստել ագրարային ոլորտի արտադրության և սպառման խնդիրների լուծմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը և կոոպերատիվի անդամների եկամուտների ավելացմանը»:

Նշված նպատակին հասնելու համար հայեցակարգով անհրաժեշտ է համարվել լուծել հետևյալ հիմնական **խնդիրները.**

- գյուղատնտեսությունում կոոպերատիվների զարգացմանը խթանող օրենսդրության կատարելագործում և համալրում.

- կոոպերացիայի առավելությունների և կոոպերատիվների հիմնադրման ու գործունեության վերաբերյալ խորհրդատվության ապահովում.
- գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման պետական աջակցության և պետություն-մասնավոր հատված համագործակցության մեխանիզմների կատարելագործում.
- գյուղատնտեսությունում իրականացվող ծրագրերի նպատակաուղղում՝ գյուղացիական կոոպերացիայի զարգացմանը:

Հայեցակարգի **կոոպերացիայի էությունը և սկզբունքները** բնորոշող մասում նախանշվում է, որ կոոպերացիան առանձին մարդկանց, տարբեր խմբերի, տնտեսավարող սուբյեկտների միջև համատեղ տնտեսություն վարելու կամ որոշակի գործառույթներ իրականացնելու գործակցություն է: Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիան, որպես շուկայական տնտեսավարման ձևերից մեկը, պետք է իր զարգացումը ստանա որոշակի ընդունված սկզբունքների վրա:

Հայեցակարգը վկայակոչում է Կոոպերատիվների միջազգային այլանսի կողմից 1995 թվականին հռչակված կոոպերատիվների հետևյալ սկզբունքները.

- **կամավոր և բաց անդամություն:** Կոոպերատիվները կամավոր կազմակերպություններ են, որոնք բաց են բոլոր այն անձանց համար, ովքեր ի վիճակի են ստանալու կոոպերատիվների ծառայությունները և պատրաստվում են պարտավորություններ ստանձնելու որպես անդամ՝ առանց սեռային, սոցիալական, ռասայական, քաղաքական կամ կրոնական որևէ խտրականության.
- **անդամների կողմից կոոպերատիվի գործունեության ժողովրդավարական վերահսկողություն:** Կոոպերատիվն իր անդամների կողմից վերահսկվող ժողովրդավարական կազմակերպություն է: Այսինքն՝ անդամներն ակտիվորեն մասնակցում են կոոպերատիվի քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը: Անդամների մեծ թվաքանակ ունեցող կոոպերատիվներում անմիջական վերահսկողությունն իրականացնում են որոշակի կանոնակարգով ընտրված ներկայացուցիչները, ովքեր հաշվետու են կոոպերատիվի անդամների առջև: Որպես կանոն, կոոպերատիվներում անդամներն ունեն հավասար ձայնի իրավունք (մեկ անդամ, մեկ ձայն).

- **անդամների տնտեսական մասնակցություն:** Կոոպերատիվի անդամները նպաստում են կոոպերատիվի ունեցվածքի ձևավորմանը և հավասար իրավունքներ ունեն դրա օգտագործման նկատմամբ.
- **ինքնավարություն և անկախություն:** Կոոպերատիվներն իրենց անդամների կողմից վերահսկվող ինքնավար կազմակերպություններ են: Եթե կոոպերատիվը պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում այլ կազմակերպությունների, այդ թվում՝ պետության հետ, ապա դա արվում է կոոպերատիվի ինքնավարությունն ու անկախությունը պահպանելու պայմանով.
- **կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն:** Կոոպերատիվը կրթություն և վերապատրաստում է ապահովում իր անդամների, ղեկավարների և մասնագետների համար: Իր գործունեության մասին հրապարակայնորեն իրազեկում է հանրությանը և ապահովում պարտավորությունների և օգուտների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ.
- **համագործակցություն կոոպերատիվների միջև:** Կոոպերատիվներն իրենց կանոնադրական խնդիրներն առավել արդյունավետ իրականացնելու, իրենց անդամների շահերին ծառայելու և կոոպերատիվ շարժումը հզորացնելու նպատակով՝ համագործակցում են տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային համանման կառույցների հետ.
- **համայնքի մասին մտահոգություն:** Կոոպերատիվներն աշխատում են իրենց համայնքները կայուն զարգացնելու նպատակով՝ համաձայն անդամների կողմից հաստատված քաղաքականության:

Հայեցակարգի նախագծի **կոոպերատիվներ և կոոպերատիվների միություններ** բաժնում նշվում է, որ ամենապարզ սահմանմամբ՝ կոոպերատիվն իր անդամների կամ մասնակիցների համար ապրանքներ և ծառայություններ արտադրելու և մատակարարելու նպատակով կամավոր սկզբունքներով ստեղծված միավոր է, որի անդամներն իրականացնում են կառավարումը և համատեղ բաժանում են առաջացած ռիսկերն ու շահույթը՝ կոոպերատիվից ստացված ծառայությունների շրջանակում:

Ըստ Կոոպերատիվների միջազգային այսանսի «Կոոպերատիվների ինքնության հռչակագրի»՝ կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերակցություն է, որը կամավոր կերպով միավորում է՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար:

Հայեցակարգի նախագծով տրվում է կոոպերատիվների ՀՀ օրենսդրությունում (մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքում) ամրագրված սահմանումները:

Նշվում է նաև, որ ըստ միջազգային փորձի գոյություն ունեն կոոպերատիվների հետևյալ ձևերը.

- **արտադրական,**
- **վերամշակող,** կան հումքի վերամշակման արդյունքում սննդամթերքի (մսամթերք, կաթնամթերք, հացամթերք, պտղաբանջարանոցային և հատապտղային պահածոներ, խմիչքներ և այլն), ինչպես նաև սննդամթերք չհանդիսացող (համակցված կերեր, դեղագործական որոշակի արտադրանք, եթերայուղեր և այլն) արտադրության նպատակով.
- **իրացնող (մարքեթինգային) կոոպերատիվներ՝** ստեղծվում են անդամների կողմից արտադրված գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների իրացման նպատակով և կարող են իրականացնել նաև արտադրանքի պահպանում, փոխադրում, փաթեթավորում, գովազդում և արտադրությունից մինչև սպառում ապրանքային շարժի փուլերի այլ գործառույթներ.
- **մատակարարման կոոպերատիվներ՝** ստեղծվում են անդամների համար պարարտանյութերի, վառելիքաքսանյութերի, բույսերի պաշտպանության քիմիական պայքարի միջոցների, սերմերի, անասնակերերի, գյուղատնտեսական տեխնիկայի, պահեստամասերի, տնկանյութերի, գյուղատնտեսական կենդանիների մատղաշի, գյուղատնտեսական արտադրության համար այլ ապրանքների մատակարարման նպատակով.

- **սպասարկող (ծառայություններ մատուցող) կոռպորատիվներ**` ստեղծվում են գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման, բույսերի պաշտպանության, տոհմային գործի, անասնաբուժության, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, գյուղական շինարարության, գյուղական բնակչությանը գիտախորհրդատվական, տեղեկատվական, առողջապահական, կրթական, կենցաղային սպասարկումների բնույթի ծառայություններ մատուցելու նպատակով.
- **վարկային կոռպորատիվներ**` ձևավորվում են գյուղական բնակչության վարկավորման մատչելիության բարձրացման, դրամական կուտակումների պահպանումն ապահովելու, ինչպես նաև ներդրումային և ֆինանսական այլ գործառնություններ իրականացնելու նպատակով.
- **ապահովագրական կոռպորատիվներ**` ստեղծվում են բերքի, անասնագլխաքանակի, արտադրության միջոցների, ինչպես նաև գյուղական բնակչության գույքի, բժշկական անհատական ապահովագրության բնագավառներում ծառայություններ մատուցելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված հայեցակարգի նախագծով նախընտրելի են համարվել կոռպորատիվների հետևյալ տեսակները` ըստ գործունեության ուղղությունների`

- գյուղատնտեսական մթերքների արտադրության.
- գյուղատնտեսական ներդրանքների մատակարարման.
- գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման.
- արտադրված արտադրանքի կուտակման և պահպանման.
- արտադրված արտադրանքի իրացման.
- գյուղատնտեսական մթերքների վերամշակման.
- խորհրդատվական ծառայությունների մատուցման.
- մասնագիտական ծառայությունների (բույսերի պաշտպանության, ագրոտեխնիկական, անասնաբուժական, անասնաբուժական և այլն) մատուցման.
- ռեսուրսների (արոտների, ոռոգման ցանցերի, դեգրադացված հողերի, աղուտների և այլն) կառավարման.
- փոխադարձ ֆինանսավորման մեխանիզմների կիրառման:

Հայեցակարգի համաձայն գյուղատնտեսական կոոպերատիվները կարող են համատեղել գործունեության մի քանի ուղղություններ:

Կոոպերատիվներն իրենց կանոնադրությանը համապատասխան, կարող են համատեղել գործունեության առանձին ձևերը՝ հանդես գալով որպես բազմա-ճյուղային (բազմաուղորտային) կոոպերատիվներ:

Կոոպերատիվներն իրավաբանական այլ անձանց հետ համատեղ, իրենց գործունեությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կարող են ստեղծել **միություններ և ասոցիացիաներ**:

Հայեցակարգի շրջանակներում տրվել են **գյուղատնտեսական կոոպերացիային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման հնարավորությունները**:

Ըստ հայեցակարգի Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հիմնական խոչընդոտներն են՝

- կոոպերացիայի բնագավառի իրավական դաշտի անկատարությունը.
- համատեղ ներդրումներով գործունեություն իրականացնելու ցանկության ու վստահության պակասը.
- կոոպերատիվների սկզբունքների և առավելությունների վերաբերյալ տնտեսավարող սյուբեկտների իրազեկվածության ցածր մակարդակը.
- գյուղատնտեսությունում կոոպերացման գործընթացը խթանող աջակցության ծրագրերի սակավությունը.
- գյուղատնտեսությունում կոոպերացիայի ներդրմանն աջակցության խորհրդատվական համակարգի կարողությունների հզորացման և դրանց գործունեության մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը:

Ըստ հայեցակարգի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կոոպերացիայի գործընթացը խոչընդոտող գործոնների հաղթահարման հնարավորություններն են՝

- կոոպերացիայի, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում կոոպերատիվների օրենսդրական հիմքերի կատարելագործումը.
- գյուղատնտեսությունում կոոպերատիվների առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների շրջանում իրազեկվածության

մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների, ծրագրերի իրականացում, գյուղատնտեսական կոոպերատիվների բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրում և տեղայնացում.

- գյուղատնտեսությունում կոոպերատիվների ձևավորմանը կազմակերպական աջակցության ծրագրերի իրականացում և այս գործընթացի իրականացման համար մասնագիտացված խմբերի ձևավորում.
- գյուղատնտեսությունում կոոպերատիվների գործունեությանը նպաստող և նորերի ձևավորմանը խթանող նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարման և տեխնիկական օժանդակության մատչելի մեխանիզմներ ներառող պետական ծրագրերի իրականացում.
- կոոպերատիվների և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ձեռնարկությունների, նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարների, գյուղատնտեսական արտադրանք արտահանողների միջև երկարաժամկետ, փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների զարգացման խթանում:

**Հայեցակարգի առանցքային մասերից է գյուղատնտեսական կոոպերացիայի օրենսդրական հիմքերի կատարելագործումը:**

Ըստ հայեցակարգի, օրենսդրական բարեփոխումները կարևորվում են գյուղատնտեսությունում կոոպերատիվների զարգացման և գործունեության կայունության համար: Միաժամանակ, օրենսդրական դաշտի կատարելագործումը և համալրումն անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ կոոպերացիայի զարգացման համար: Վերջինս պահանջում է նաև հետևյալ քայլերի ձեռնարկում.

- կոոպերատիվների ձևավորման տնտեսական խթանմանը և կայունությանն ուղղված գործիքների կիրառում.
- կոոպերատիվների սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում.
- գյուղատնտեսությունում կոոպերատիվների ձևավորմանը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորում:

Հայեցակարգով նախանշվում է, որ, օրենսդրական փաստաթղթերը լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների իրավական դաշտը և առկա է նորացման և բարեփոխումների անհրաժեշտություն:

**Հայեցակարգի շրջանակներում օրենսդրության կատարելագործման և համալրման հիմնական ուղղություններն են.**

- կոոպերացիայի բնագավառում օրենսդրության կատարելագործման միջոցառումների իրականացում, մասնավորապես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկի 4-րդ բաժնի 4.1. կետի շրջանակներում.

- կոոպերացիայի բնագավառում օրենսդրության կատարելագործման հենքում պետք է դրված լինի կոոպերատիվների միջազգային այլասի կողմից սահմանած 7 սկզբունքները.

- օրենսդրական կարգավորման կատարելագործման անհրաժեշտություն ունի կոոպերացիայի բնագավառի հետևյալ հարաբերությունները՝

ա. կոոպերատիվների ստեղծման, գործունեության իրականացման, դադարման, վերակազմավորման, լուծարման առնչությամբ ծագող հարաբերությունները և մասնակիցների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը,

բ. կոոպերատիվների հետ առնչվող հիմնական հասկացությունները,

գ. կոոպերատիվի ստեղծման և գործունեության իրականացման հիմնական սկզբունքները,

դ. կոոպերատիվների ձևերը և առանձնահատկությունները,

ե. կոոպերատիվների միությունների ձևավորման և գործունեության առանձնահատկությունները,

զ. կոոպերատիվի հիմնադրման, հիմնադիր փաստաթղթերի առանձնահատկությունները,



է. կոռուպցիայի անդամագրման, անդամության դադարման առանձնահատկությունները,

ը. հարկային հատուկ մոտեցումները,

թ. կոռուպցիայի կառավարման մարմինների կառուցվածքը, ընդհանուր ժողովի իրավասությունները և դրա անցկացման ու որոշումների ընդունման կարգը,

ժ. կոռուպցիայի գույքային հարաբերությունները,

ժա. կոռուպցիայի վերակազմակերպման, լուծարման հետ կապված հարաբերությունները:

Հայեցակարգի նախագծով գյուղատնտեսությունում կոռուպցիայի ձևավորումը խթանելու նպատակով անհրաժեշտ է համարվել սահմանել նաև օրենսդրական կարգավորում պահանջող հետևյալ այլ դրույթները.

- կոռուպցիայի հիմնական նպատակն իր անդամների շահերի բավարարումն է: Կոռուպցիայը կարող է ապրանքներ ու ծառայություններ մատուցել նաև ոչ անդամներին՝ ապրանքաշրջանառության և արտադրության ծավալների ավելացմամբ շոշափելի տնտեսումների հասնելու և ֆինանսական կայունության հասնելու նպատակով: Սակայն, այդ ծառայությունների տեսակարար կշիռը պետք է լինի սահմանափակ և կոռուպցիայի իր հիմնական ծառայությունները պետք է նպատակաուղղի իր անդամների շահերին: Աշխատանքային գործունեության տեսակարար կշիռը անդամների և ոչ անդամների միջև պետք է հստակ սահմանված լինի կոռուպցիայի կանոնադրությամբ: Կոռուպցիայի անդամը, սեփականատեր հանդիսանալուց բացի, պետք է նաև մասնակցի կոռուպցիայի կառավարմանը և օգտվի կոռուպցիայի ծառայություններից: Նպատակահարմար չէ կոռուպցիայում ոչ ակտիվ անդամների ներգրավումը, որոնք նաև կոռուպցիայի անդամակցումից ոչ ակտիվ օգտվողներ են: Պասիվ անդամները նսեմացնում են կոռուպցիայի դերը և թուլացնում գործակցության ոգին: Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել դրույթ՝ կոռուպցիայի սկզբունքներին չհամապատասխանող կոռուպցիայի ձևավորումը կանխարգելելու, ինչպես նաև մեկ տարուց պակաս ժամկետով կոռուպցիային անդամակցելու դեպքում, կոռուպցիայի անդամակցությունից զրկելու վերաբերյալ.

- կոոպերատիվի գործունեության արդյունավետությունը կախված է կոոպերատիվի կառավարմանը դրա անդամների մասնակցությունից: Կոոպերատիվը պետք է ունենա պարտադիր և կամավոր կառավարման մարմիններ: Ներկայումս կոոպերատիվների կառավարումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 119-րդ հոդվածով: Անհրաժեշտ է օրենսդրության կատարելագործման արդյունքում հստակ սահմանել կոոպերատիվի կառավարման պարտադիր և կամավոր մարմինների գործառույթները, ձևավորման կարգն և պարտականությունները, ինչպես նաև համապատասխան հանձնաժողովների ձևավորման մոտեցումները:
- անբաժանելի ֆոնդերը հանդիսանում են կոոպերատիվների կայունության երաշխիք և օգտագործվում են կոոպերատիվների կորուստները վերականգնելու համար: Անբաժանելի ֆոնդերը չեն բաժանվում անդամների միջև և անձեռնամխելի են կոոպերատիվների գոյության ընթացքում: Միջազգային փորձը վկայում է, որ կոոպերատիվների անբաժանելի ֆոնդերը պարտադիր են և ենթակա չեն հարկման: Կոոպերատիվը չնախատեսված ռիսկերից ապահովագրելու համար տարբեր երկրներ սահմանել են անբաժանելի ֆոնդերի նվազագույն դրույքաչափեր՝ տարեկան շահույթի 5-30 %-ի չափով: Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել դրույթ հանրապետությունում անբաժանելի ֆոնդերը կոոպերատիվների համար պարտադիր դարձնելու և նվազագույն շեմը տարեկան շահույթի 5 %-ի չափով՝ մինչև կանոնադրական կապիտալի չափին հասցնելու վերաբերյալ:
- տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ կոոպերատիվների մասին օրենքում ամրագրված է պարտադիր աուդիտի իրականացումը, որը հետապնդում է մեկ նպատակ՝ համոզվելու, որ կոոպերատիվները պահպանում են սահմանված կանոնները: Կոոպերատիվների աուդիտը հիմնականում տարանջատված է պետական գործառույթներից և իրականացվում է կոոպերատիվների միությունների կողմից: Տվյալ դեպքում աուդիտի նպատակը ոչ թե կոոպերատիվների հանդեպ տույժերի ու տուգանքների կիրառումն է, այլ դրանց գործունեությանն աջակցությունը և ճիշտ ուղղորդումը: Անհրաժեշտ է

օրենսդրորեն ամրագրել ամենամյա աուդիտի անցկացման վերաբերյալ դրույթ, համոզվելու համար, որ կոոպերատիվները պահպանում են ընդունված սկզբունքները և գործում են թափանցիկ: Աուդիտը պետք է ունենա խորհրդատվական բնույթ և լինի տարանջատված այլ ընկերությունների համար իրականացվող աուդիտային ծառայություններից:

**Հայեցակարգի նախագծի կարևոր մասերից է կոոպերացիայի զարգացմանն ուղղված պետական աջակցության ուղղություններին վերաբերող մասը:**

Հայեցակարգի նախագծով ամրագրված է, որ գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև համագործակցության, տնտեսավարման արդյունավետ ձևերի կիրառումն օբյեկտիվ պահանջ է: Այդ տեսանկյունից գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումն ագրարային քաղաքականության կարևորագույն ուղղություններից է:

Ըստ հայեցակարգի, Կոոպերատիվների զարգացումը հանրապետության ագրարային հատվածի մրցունակության բարձրացման և գյուղական աղքատության կրճատման կարևոր ուղղություն է, որը կարիք ունի բազմակողմանի և հետևողական պետական աջակցության: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել պետական աջակցության համապատասխան քաղաքականություն:

**Հայեցակարգով առաջադրվում է Կոոպերատիվների տնտեսական խթանմանը և կայունությանն ուղղված պետական աջակցության հետևյալ գործիքների կիրառումը՝**

- գյուղատնտեսության ոլորտում իրականացվող մի շարք կարևորագույն ծրագրերի իրականացում կոոպերատիվների միջոցով: Այդ վերաբերում է վարկային ծրագրերի շրջանակներում մրցակցային դրամաշնորհային ծրագրերին, տեխնոլոգիաների գնահատման և այլ ծրագրերին.
- դրամաշնորհների և այլ աղբյուրների հաշվին հանրապետություն ներկրվող գյուղատնտեսական տեխնիկայի՝ տրակտորների, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայնների, տրակտորային կցասայլերի և գյուղատնտեսական գործիքների, կաթի պահպանման և վերամշակման սարքավորումների բաշխման ժամանակ գյուղատնտեսական կոոպերատիվներին առաջնություն տալը.

- գյուղատնտեսական կոոպերատիվների համար տեխնիկական միջոցների մատակարարման մատչելի պայմաններով լիզինգային մեխանիզմների կիրառում և մատչելի վարկերի տրամադրում.
- գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերում գյուղատնտեսական կոոպերատիվներին առաջնահերթ ներառում և տարբերակված մոտեցման ցուցաբերում.
- «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շարունակում և ծրագրի փորձից ելնելով հանրապետության այլ համայնքներում նման ուղղվածության վարկային ծրագրերի իրականացում: Ծրագրի փորձի և արդյունքների տարածում հանրապետության այլ համայնքներում.
- գյուղատնտեսական կոոպերատիվների և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող, գյուղատնտեսական մթերքներ արտահանող, գյուղատնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսներ (պարարտանյութ, թունաքիմիկատներ, վառելանյութ, տեխնիկական միջոցներ և այլն) մատակարարող ընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների խթանում:

**Կոոպերատիվների սկզբունքների, առավելությունների գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ հայեցակարգով անհրաժեշտ է համարվել հետևյալ քայլերի ձեռնարկումը.**

- գյուղատնտեսությունում կոոպերատիվների միջազգային փորձի ուսումնասիրության և դրա տեղայնացման հնարավորությունների գնահատման նպատակով Եվրամիության Թայեքս ծրագրի տարբեր գործիքների կիրառում.
- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով գյուղական համայնքներում կոոպերատիվների սկզբունքների, առավելությունների վերաբերյալ տարբեր մեխանիզմներով (սեմինարներ, տեղեկատվական թերթիկներ, անհատական հանդիպումներ, զանգվածային լրատվության միջոցներ) խորհրդատվության տրամադրում.

- կոոպերատիվների ձևավորման հաջորդական քայլերի (կոոպերատիվների ձևավորման ճանապարհային քարտեզ ուղեցույցի) մշակում և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ գյուղական համայնքներում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին իրազեկում և կոոպերատիվների ձևավորմանը աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի կամ առանձին ձևավորված մասնագիտական խմբերի կողմից:

Հայեցակարգում ըստ կոոպերատիվների ձևավորման փորձի և մասնագիտական գրականության կոոպերատիվների ձևավորման քայլերը պայմանականորեն բաժանվել է 8 փուլի և դրա առանձին բաղադրիչների: Հիշատակված փուլերն են՝

- 1) նախաձեռնության զարգացում,
- 2) համայնքային ժողովում կոոպերատիվի գաղափարի քննարկում,
- 3) նախաձեռնող հանձնաժողովի ստեղծում,
- 4) հնարավորությունների ուսումնասիրում և անդամներին հարցումներ,
- 5) կազմակերպության ձևի հիմնավորում,
- 6) անդամների պարտավորվածության ապահովում,
- 7) շահագրգիռ այլ կողմերի ներգրավում,
- 8) կոոպերատիվի մեկնարկ:

**Հայեցակարգով գյուղատնտեսությունում կոոպերատիվների ձևավորմանը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորման քայլեր կարող են համարվել՝**

- հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման, գործունեության աջակցության գործընթացը համակարգելու համար գյուղատնտեսության պետական կառավարման լիազոր մարմնի կառուցվածքում, կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, առկա հաստիքների հաշվին գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության ստորաբաժանման ստեղծումը: Ստորաբաժանումն իր գործունեությունը պետք է իրականացնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների հետ համագործակցված.

- հաշվի առնելով, որ գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումն հաջողված և դրանց գործունեությունն առավել կենսունակ է եղել, եթե կոոպերատիվների ձևավորումը և սկզբնական գործունեությունը զուգորդվել է որոշակի աջակցության տարրերով, մասնավորապես՝ խորհրդատվության, մատչելի պայմաններով տեխնիկական միջոցների և փոխառու միջոցների տրամադրմամբ և այլն՝ նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի» վերակազմավորումը, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության գործառույթների վերապահումն ու գործունեության ապահովումը: Հիմնադրամը գործունեությունն իրականացնելու է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն (ՀՕ-516-Ն, 2003 թվական) և գործունեության համար ֆինանսավորման աղբյուրներ են հանդիսանալու օրենսդրությամբ չարգելված միջոցները (դրամաշնորհներ, փոխառու միջոցներ, պետական բյուջեի միջոցներ և այլն): Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության մասով հիմնադրամի նպատակներն են՝

ա. գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և գործունեության խորհրդատվական աջակցության կազմակերպումը,

բ. գյուղատնտեսական կոոպերատիվների համար աջակցության տարբեր ծրագրերի իրականացումը,

գ. գյուղատնտեսական կոոպերատիվներին մատչելի պայմաններով փոխառու միջոցների տրամադրումը,

դ. օրենքով չարգելված աջակցության այլ ձևերի և մեխանիզմների կիրառումը:

Հայեցակարգի նախագծով նախանշվել են **փաստաթղթի իրականացումից ակնկալվող արդյունքները**, որոնք հիմնականում հետևյալն են.

- կոոպերատիվների ձևավորման և գործունեության հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման արդյունքում կխթանվի գյուղատնտեսա-

կան կոռպերատիվների ձևավորման գործընթացը, կրնդլայնվեն գործող կոռպերատիվների կարողությունները.

- պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի, հատկապես հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործման համար.
- գյուղացիական տնտեսությունների արտադրական, մատակարարման, իրացման և այլ խնդիրների համատեղ լուծման արդյունքում գների, որակի և աշխատանքի ժամանակին կազմակերպման արդյունքում կբարձրանա գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը.
- հնարավորություններ կընձեռնվեն գյուղատնտեսությունում ագրոտեխնիկայի, առաջադիմական տեխնոլոգիաների, ցանքաշրջանառության կիրառման համար.
- կոռպերատիվների գործունեությունը կնպաստի նաև գյուղական համայնքների զարգացմանը.
- կոռպերատիվների զարգացումը կնպաստի գյուղատնտեսական մթերքներ արտադրողների սոցիալական վիճակի և տնտեսական ներուժի ամրապնդմանը, գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը.
- գյուղացիական տնտեսությունների գործունեությունը կոռպերացման տարբեր ձևերով, միավորումներով հնարավորություն կընձեռնի մեղմելու ներկայումս իրենց առջև ծառայած մի շարք խնդիրների լուծումը, մասնավորապես՝ առավել հեշտությամբ կլուծվեն.

ա. գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների հարցերը,

բ. արտադրանքի իրացումը, արտահանումը,

գ. արտադրության նախընտրելի մասնագիտացումը,

դ. նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրության վերազինման խնդիրները,

ե. մարքեթինգի հետ առնչվող հարցերը:

Հայեցակարգով նախանշվում է, որ կոռպերատիվների գործունեությունը շոշափելիորեն կբարձրացնի գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը, կավելանան գյուղատնտեսական մթերքների և դրանց վերամշակումից ստացվող

արտադրանքի ծավալները, որի արդյունքում կավելանա բնակչության եկամուտները և կբարձրանա երկրի պարենային անվտանգության մակարդակը:

Հայեցակարգի նախագիծը ներառում է ՀՀ գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող **միջոցառումների ժամանակացույցը**, որը ներառում է 11 միջոցառում, ակնկալվող արդյունքներով, պատասխանատու կատարողով, կատարման ժամկետով և ֆինանսավորման աղբյուրներով:

Նշված միջոցառումները և դրանցից ակնկալվող արդյունքները ներկայացվում են ստորև.

1. գյուղատնտեսությունում կոոպերատիվների առավելությունների, դրանց արդյունավետության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում (գյուղացիական տնտեսությունների շրջանում կոոպերատիվների առավելությունների, արդյունավետության ներկայացման արդյունքում կոոպերատիվների ձևավորման կամավորության սկզբունքի պահպանում և ձևավորման խթանում).
2. գյուղատնտեսության խորհրդատվական համակարգի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի և գյուղատնտեսական քոլեջների ուսումնական ծրագրերում գյուղատնտեսական կոոպերացիայի մասին առանձին դասընթացի ընդգրկում (գյուղատնտեսական կոոպերացիայի առանձնահատկությունների և առավելությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, կոոպերացիայի վերաբերյալ գիտելիքների տիրապետող մասնագետների պատրաստում).
3. կոոպերատիվների տնտեսական կայունությանն ուղղված մեխանիզմների մշակում և կիրառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում (գործող գյուղատնտեսական կոոպերատիվների կարողությունների հզորացում, կոոպերատիվների ձևավորման համար խթանների ստեղծում).
4. գյուղատնտեսական ուղղվածության մեկ ցուցադրական փորձնական կոոպերատիվի ստեղծում (կիրառված փորձը հիմք կհանդիսանա այլ



- գյուղացիական տնտեսությունների համար կոոպերատիվների ձևավորման և գործունեության արդյունավետ մեխանիզմների կիրառման համար)։
5. Կոոպերատիվների միջազգային այլանսի հետ համագործակցության զարգացում (կոոպերացիայի խթանման միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունների ստեղծում)։
  6. «Գյուղատնտեսական կոոպերատիվների օրինակելի կանոնադրության մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ՀՀ կառավարություն ներկայացնելը (կոոպերատիվների հիմնադրման գործընթացում իրավական աջակցություն, հիմնադիր փաստաթղթերի իրավական ակտերի պահանջների համապատասխանության ապահովում)։
  7. կոոպերատիվների ձևավորման ճանապարհային քարտեզ-ուղեցույցի մշակում և հրատարակում, դրանց ներդրման աշխատանքների իրականացում (գյուղական կոոպերատիվների ձևավորման գործընթացում խորհրդատվության տրամադրում և կոոպերատիվի կազմակերպմանն աջակցություն)։
  8. կոոպերացիայի զարգացման վերաբերյալ ամենամյա գիտագործնական համաժողովի անցկացում (կոոպերացիայի լավագույն փորձի ներկայացում, արդյունքների ամփոփում, նյութական ու բարոյական խրախուսում)։
  9. «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի փորձի արդյունքների հիման վրա այլ համայնքներում նման ուղղվածության ծրագրերի իրականացման հայտի ներկայացում (անասնապահական կոոպերատիվների խթանման և զարգացման միջոցով բնական կերահանդակների, այլ ռեսուրսների ներուժի արդյունավետ զարգացում, գյուղատնտեսության բնագավառում եկամտի ավելացում)։
  10. Եվրամիության Թայեքս ծրագրի տարբեր գործիքների կիրառմամբ կոոպերացիայի փորձի ձեռքբերում (կոոպերացիայի միջազգային փորձի ուսումնասիրում և դրա տեղայնացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում)։
  11. «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության» հիմնադրամի վերակազմավորում, դրան գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության

գործառույթների վերապահում և գործունեության ապահովում (կոոպերացիայի աջակցության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հայթայթում, դրանց նպատակային և արդյունավետ օգտագործման համար նախադրյալների ստեղծում):

2. Գյուղատնտեսական կոոպերացիային առնչվող հաջորդ, շրջանառության մեջ գտնվող, իրավական ակտի նախագիծը դա «**Հայաստանի Հանրապետության 2013-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրն**» է:

Նշված նախագծի «**Գյուղատնտեսությունը և գյուղի զարգացումը**» 4.2.4. ենթաբաժնի «Ոլորտի զարգացման հեռանկարները» մասի «Գյուղի և գյուղատնտեսության հեռանկարային զարգացման տեսլականներ»-ին վերաբերող մասի առաջին դրույթը շարադրված է հետևյալ կերպ՝ «ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, **կոոպերատիվների** և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացում»: Նախագծի առանցքային դրույթներից մեկը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Ստեղծված իրավիճակում ագրարային ոլորտում կիրառվող քաղաքականության մեջ կարևորվում է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես՝ կոոպերացիայի խթանման քաղաքականությունը: Առավել նպատակահարմար են կոոպերացիայի զարգացման հիմնական չորս ուղղություններ.

- 1) օրենսդրության կատարելագործումը և համալրումը.
- 2) կոոպերացիայի ձևավորման տնտեսական խթանման մեխանիզմների կիրառումը,
- 3) կոոպերացիայի սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը.
- 4) գյուղատնտեսությունում կոոպերացիայի ձևավորմանը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը»:

Ռազմավարական ծրագրի ընդունումը հնարավորություն կտա նախանշված ուղղություններով առանձին գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը նպաստող ծրագրային փաստաթղթերի մշակումը, ընդունումը և իրականացումը, այդ թվում նաև ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող ծրագրեր:

**3.** Գյուղատնտեսությունում կոոպերացիայի բնագավառի հարաբերությունների կարգավորման, կոոպերացիայի խթանման կարևորագույն նախագծերից է համարվում «Գյուղատնտեսական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը դեռևս քննարկման փուլում է, և առաջիկայում նախատեսվում է լրամշակում՝ քննարկման արդյունքներից ելնելով:

Օրենքի նախագիծը ներառում է հետևյալ 7 գլուխները և 36 հոդվածները:

**Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ.**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան.

Հոդված 2. Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենսդրությունը.

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

Հոդված 4. Գյուղատնտեսական կոոպերատիվների նպատակներն ու խնդիրները.

Հոդված 5. Կոոպերատիվի իրավական կարգավիճակը, ստեղծման և գործունեության իրականացման հիմնական սկզբունքները.

Հոդված 6. Կոոպերատիվների տեսակները.

Հոդված 7. Կոոպերատիվների միությունները.

Հոդված 8. Կոոպերատիվների և միությունների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները.

**Գլուխ 2. Կոոպերատիվի հիմնադրումը և անդամությունը.**

Հոդված 9. Կոոպերատիվի ստեղծումը.

Հոդված 10. Կոոպերատիվի հիմնադրումը.

Հոդված 11. Կոոպերատիվի կանոնադրությունը.

Հոդված 12. Կոոպերատիվի պետական գրանցումը.

Հոդված 13. Կոոպերատիվի անդամները.

Հոդված 14. Կոոպերատիվում անդամագրվելը.

Հոդված 15. Կոոպերատիվի անդամության դադարումը և փայի անցումը.

**Գլուխ 3. Կոոպերատիվի կառավարումը.**

Հոդված 16. Կոոպերատիվի կառավարման մարմինների կառուցվածքը.

Հոդված 17. Ընդհանուր ժողովի իրավասությունները.

Հոդված 18. Հերթական ընդհանուր ժողով.

Հոդված 19. Արտահերթ ընդհանուր ժողովը.

Հոդված 20. Ընդհանուր ժողովի գումարման կարգը.

Հոդված 21. Ընդհանուր ժողովի անցկացման և որոշումների ընդունման կարգը.

Հոդված 22. Կոոպերատիվի գործադիր մարմինը.

Հոդված 23. Կոոպերատիվի դիտորդ խորհուրդը.

Հոդված 24. Կոոպերատիվի վերստուգող հանձնաժողովը.

**Գլուխ 4. Կոոպերատիվի գույքը.**

Հոդված 25. Կոոպերատիվի գույքի ձևավորման աղբյուրները.

Հոդված 26. Փայերի մուծումը.

Հոդված 27. Կոոպերատիվի ավելցուկի և շահույթի բաշխումը.

Հոդված 28. Կոոպերատիվի և կոոպերատիվի անդամների գույքային պատասխանատվությունը.

**Գլուխ 5. Կոոպերատիվի վերակազմակերպումը և լուծարումը.**

Հոդված 29. Կոոպերատիվի վերակազմակերպումը.

Հոդված 30. Կոոպերատիվների աուդիտի իրականացումը.

Հոդված 31. Կոոպերատիվի լուծարումը.

Հոդված 32. Լուծարման կարգը.

**Գլուխ 6. Գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում պետական աջակցությունը.**

Հոդված 33. Գյուղատնտեսական կոոպերատիվների և գյուղատնտեսական կոոպերատիվների միության ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները.

Հոդված 34. Գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում պետական աջակցության ուղղությունները.

**Գլուխ 7. Եզրափակիչ դրույթներ.**

Հոդված 35. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները կատարելու համար.

Հոդված 36. Օրենքի ուժի մեջ մտնելը:

**Նախագծի հիմնավորման մեջ Օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը** հետևյալն է.

«Վերջին տարիներին գյուղատնտեսությունում գրանցված որոշակի դրական տեղաշարժերի հետ մեկտեղ ոլորտում բնատնտեսական ներուժի օգտագործման մակարդակը դեռևս բավականին ցածր է, որի հիմնական պատճառներից մեկը հանրապետության գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն են և տնտեսությունների համատեղ գործունեության ձեռնարկումների դանդաղ ընթացքը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում տարբեր լծակներով և մեխանիզմներով խթանել փոքր հողակտորների համատեղ օգտագործման և խոշորացման, հողերի միավորման, կոոպերացիայի կազմակերպման միջոցառումների իրականացումը, որը բխում է ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 16-ի որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից և ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունից, ինչպես նաև այլ իրավական ակտերի դրույթներից:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի կոոպերատիվների վերաբերյալ մեկ, ամբողջական, համապարփակ օրենք, ինչպես ընդունված է շատ երկրներում: Կոոպերատիվների ոլորտը հիմնականում կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 117-121-րդ հոդվածներն ամբողջությամբ վերաբերում են կոոպերատիվներին: 117-րդ հոդվածը վերաբերում է կոոպերատիվների հիմնական դրույթներին, որոնցով տրվում են կոոպերատիվի սահմանումը, կոոպերատիվի կանոնադրության բովանդակությունը, հիմնական դրույթները, կոոպերատիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և հղումներ են տրվում իրավական վիճակը սահմանող այլ օրենքներին: Սակայն օրենսգիրքը չի կարգավորում գյուղատնտեսական կոոպերացիայի հետ կապված մի շարք հարաբերություններ: Հետևաբար, առաջարկվող օրենքի մշակումը և ընդունումը հիմք կծառայի գյուղատնտեսությունում կոոպերացիայի հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման:

Կոոպերատիվներին առնչվող ՀՀ օրենքները, ընդհանուր առմամբ չեն համապատասխանում Աշխատանքի միջազգային կազմակերպության 2002 թվականին ընդունված «Կոոպերատիվներին աջակցության» թիվ 193 առաջարկությանը (Հայաստանն անդամակցում է 1992 թվականից) և Կոոպերատիվների միջազգային դաշնության սահմանած դրույթներին:

Գյուղատնտեսությունը լինելով հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկը մյուս ոլորտների համեմատ օժտված է յուրահատուկ առանձնահատկություններով, ուստի նպատակահարմար է, որ գյուղատնտեսական կոոպերացիայի հարաբերությունների կարգավորումն իրականացվի առանձին օրենսդրական փաստաթղթով:

Հանրապետության տնտեսության ազատականացման, հողի, անասնազվաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրության այլ միջոցների մասնավորեցման (սեփականաշնորհման) արդյունքում ձևավորվել և ներկայումս գործում են գյուղացիական 340 հազար տնտեսություններ, դրանց բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր: Գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն ու ռեսուրսային ներուժի ոչ լիարժեք օգտագործումը, հողաբաժինների կտրվածությունն ու փոքրությունը, հողի շուկայի դեռևս դանդաղ ձևավորումը, գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման հետ կապված

դժվարությունները հնարավորություն չեն տալիս վարել արդյունավետ գյուղատնտեսություն:

Ստեղծված իրավիճակում կարևորվում և պահանջվում է ագրարային ոլորտում կիրառվող տնտեսավարման ձևերի կատարելագործում, կոոպերացիայի զարգացման ուղղությամբ համակարգված պետական քաղաքականության իրականացում, որը պահանջում է տվյալ ոլորտում կարգավորող համապարփակ օրենսդրական փաստաթղթի առկայություն:»:

**Ըստ նախագծի հիմնավորման՝ տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը հետևյալն է.**

«Ներկայումս հանրապետության ագրարային ոլորտում վարվող քաղաքականության կարևորագույն ուղղություններից է գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի զարգացումը, մասնավորապես կոոպերացիայի խթանումը: ՀՀ կառավարության գործունեության ծրագրում, ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության խնդիրների շարքում առանձնանում է կոոպերացիայի զարգացումը: Ռազմավարության շրջանակներում գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացման համատեքստում միջոցառումները նպատակաուղղվում են գյուղատնտեսությունում կոոպերացիայի տարբեր ձևերի խթանմանը: Սակայն, հանրապետության գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանումը և զարգացումը պահանջում է մի շարք միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ օրենսդրության կատարելագործման միջոցով գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում ձևավորվող հարաբերությունների կանոնակարգում, կոոպերացիայի ձևավորման տնտեսական խթանման մեխանիզմների կիրառում, կոոպերատիվների սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում, գյուղատնտեսությունում կոոպերացիայի ձևավորմանը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորում: Գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացումը պահանջում է նշված ուղղություններով համակարգված քաղաքականության իրականացում, որի համար հիմք պետք է ծառայի նշված օրենքի նախագծի դրույթները»:

Նախագծի հիմնավորման մեջ որպես **նախագծի նպատակներ** նշված են՝

- 1) անդամների համատեղ գործունեության արդյունավետության բարձրացումը,
- 2) ավելի շատ ռեսուրսների մոբիլիզացում քան կոոպերատիվի անդամները կարող են ներդնել,
- 3) ապրանքներ ու ծառայություններ գնելու համար այլընտրանքային առավել շահեկան հնարավորությունների ստեղծումը,
- 4) անդամների համար կրթական և վերապատրաստման, կարողությունների հզորացման հնարավորությունների ստեղծումը,
- 5) բիզնեսը ավելի արդյունավետ կերպով վարելը, քան կարելի է անել անհատապես:

Ըստ նախագծի հիմնավորման Նախագծի ընդունումից և կիրառումից ակնկալվում են **հետևյալ արդյունքները՝**

- կբարելավի գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացման օրենսդրական հիմքերը.
  - կհստակեցվի գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները.
  - կխթանվի գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը.
  - գյուղացիական տնտեսությունների արտադրական, մատակարարման, իրացման և այլ խնդիրների համատեղ լուծման արդյունքում գների, որակի և աշխատանքի ժամանակին կազմակերպման արդյունքում կբարձրանա ինչպես գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը, այնպես էլ ոլորտում տնտեսավարողների մրցունակությունը.
  - կբարձրանա երկրի պարենային անվտանգության մակարդակը.
- կոոպերատիվների գործունեությունը կնպաստի նաև գյուղական համայնքների զարգացմանը:

**«Գյուղատնտեսական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի կարգավորման առարկան է «գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, անդամակցության, գործունեության իրականացման, կառավարման, գործունեության դադարման, վերակազմակերպման, լուծարման հետ կապված հարաբերությունները**



և սահմանում է դրանց մասնակիցների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը»:

Նախագծով տրվում է գյուղատնտեսական կոոպերացիայի մասին օրենսդրության շրջանակը (հոդված 2), մասնավորապես. «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, տվյալ օրենքից և իրավական այլ ակտերից:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

Նախագծի 3-րդ հոդվածով սահմանվում է հիմնական հասկացությունները, որը ընդգրկում է հետևյալը՝ գյուղատնտեսական կոոպերացիա, ագրոպարենային համակարգ, ագրոպարենային համակարգ, գյուղատնտեսություն, գյուղատնտեսական արտադրություն, գյուղատնտեսական արտադրանք, գյուղատնտեսական կոոպերատիվ, պարտադիր փայեր (փայավճարներ), լրացուցիչ (փայ) փայավճար, կոոպերատիվի աշխատող կոոպերատիվի անբաժանելի ֆոնդ, կոոպերատիվի պահուստային ֆոնդ, պատրոնաժ, մասնակցություն կոոպերատիվի տնտեսական գործունեությանը:

Նախագծի 4-րդ հոդվածով սահմանվում է գյուղատնտեսական կոոպերացիայի նպատակներն ու խնդիրները, մասնավորապես. «Գյուղատնտեսական կոոպերատիվների (այսուհետ՝ կոոպերատիվներ) նպատակներն են՝

- ա. անդամների համատեղ գործունեության արդյունավետության բարձրացում,
- բ. ավելի շատ ռեսուրսների մոբիլիզացում քան կոոպերատիվի անդամները կարող են ներդնել,
- գ. ապրանքներ ու ծառայություններ գնելու համար ստեղծել այլընտրանքային առավել շահեկան հնարավորություններ,
- դ. անդամների համար կրթական և վերապատրաստման, կարողությունների հզորացման հնարավորությունների ստեղծում,
- ե. բիզնեսը վարել ավելի արդյունավետ կերպով, քան կարելի է անել անհատապես:

Կոոպերատիվների խնդիրներն են՝

ա) կոոպերատիվի անդամների շահերի պաշտպանությունը,

բ) տնտեսական հիմնահարցերի արձագանքումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ կոոպերատիվի անդամների գործունեության վրա,

գ) համատեղ աշխատանքի առավելություններից օգտվելը»:

Նախագծի 5-րդ հոդվածով սահմանվում է կոոպերատիվների իրավական կարգավիճակը, ստեղծման գործունեության իրականացման հիմնական սկզբունքները: Մասնավորապես. «Կոոպերատիվը իրավաբանական անձ է, որի տնտեսական նախաձեռնությունները միջոցներ են ստեղծում բարելավելու անդամների բարեկեցությունը կամ իրականացնելու ավելի լայն սոցիալական նպատակներ:

Կոոպերատիվի տնտեսական նախաձեռնության հիմնական նպատակը չպետք է լինի շահույթի ստացումը և ամբողջ շահույթի բաշխումը: Կոոպերատիվի նպատակը դրական տնտեսական արդյունքի միջոցով իրենց անդամների ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքների բացահայտումն է:

Կոոպերատիվներում տարբերակվում է դրական տնտեսական արդյունքների բաղադրիչները՝ շահույթ, որը առաջանում է ոչ անդամների հետ ունեցած գործարքներից, և ավելցուկ, որն առաջանում է կոոպերատիվի սկզբունքներին համաձայն կոոպերատիվի անդամների հետ ունեցած գործարքներից: Կոոպերատիվի սկզբունքներին համաձայն շահույթը պետք է ուղղել կոոպերատիվի անբաժանելի և պահուստային ֆոնդերին, իսկ ավելցուկը կամ դրա մի մասը պետք է բաշխվի անդամների միջև ըստ կոոպերատիվի հետ ունեցած գործարքների համամասնության որոշակի նշված ժամանակահատվածում»:

Հոդվածով սահմանվում է կոոպերատիվների ստեղծման և գործունեության իրականացման հիմնական սկզբունքները, այն է՝ «կոոպերատիվներին կամավոր և բաց անդամությունը, անդամների կողմից կոոպերատիվի գործունեության ժողովրդավարական վերահսկողությունը, կոոպերատիվի անդամների տնտեսական մասնակցությունը, ինքնավարությունը և անկախությունը, կրթությունը, վերա-

**պատրաստումը և տեղեկատվությունը, համագործակցությունը կոոպերատիվների միջև, համայնքի մասին մտահոգվածությունը»:**

Նախագծի 6-րդ հոդվածը սահմանում է կոոպերատիվների տեսակները, մասնավորապես դրանց առանձնահատկությունները, որոնք դասակարգվում են հետևյալ ուղղությունների՝

1) **գյուղատնտեսական մթերքների արտադրության՝** ստեղծվում են բուսական և կենդանական ծագման գյուղատնտեսական հումքի ու մթերքի համատեղ արտադրության և վաճառքի նպատակով.

2) **գյուղատնտեսական ներդրանքերի մատակարարման՝** ստեղծվում են անդամների համար պարարտանյութերի, վառելիքաքսանյութերի, բույսերի պաշտպանության քիմիական պայքարի միջոցների, սերմերի, անասնակերերի, գյուղատնտեսական տեխնիկայի, պահեստամասերի, տնկանյութերի, գյուղատնտեսական կենդանիների մատղաշի, գյուղատնտեսական արտադրության համար այլ ապրանքների մատակարարման նպատակով.

3) **սպասարկող (ծառայություններ մատուցող) կոոպերատիվներ՝** ստեղծվում են գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքներով սպասարկումների, բույսերի պաշտպանության, տոհմային գործի, անասնաբուծության, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, գյուղական շինարարության, գյուղական բնակչությանը գիտախորհրդատվական, տեղեկատվական, կենցաղային սպասարկումների բնույթի ծառայություններ մատուցելու նպատակով.

4) **արտադրված արտադրանքի իրացման՝** ստեղծվում են անդամների կողմից արտադրված գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների իրացման նպատակով և կարող են իրականացնել արտադրանքի պահպանում, փոխադրում, փաթեթավորում, գովազդում և արտադրությունից մինչև սպառում ապրանքային շարժի փուլերի այլ գործառույթներ.

5) **գյուղատնտեսական մթերքների վերամշակման՝** ստեղծվում են գյուղատնտեսական հումքի և մթերքի վերամշակման արդյունքում սննդամթերքի (մսամթերք, կաթնամթերք, հացամթերք, պտղաբանջարանոցային և հատապտղային

պահածոներ, խմիչքներ և այլն), ինչպես նաև աննդամթերք չհանդիսացող (համակցված կերեր, դեղաբույսեր, եթերայուղեր և այլն) արտադրատեսակների արտադրության նպատակով.

6) **խորհրդատվական ծառայությունների մատուցման`** ստեղծվում են կոոպերատիվի անդամներին գյուղատնտեսության ոլորտի տարբեր բնագավառների հետ կապված խորհրդատվության, արդիական տեխնոլոգիաների ներդրման աջակցության, տեղեկատվության տրամադրման նպատակով.

7) **փոխադարձ ֆինանսավորման մեխանիզմների կիրառման`** ստեղծվում են անդամների համար փոխառու միջոցների մատչելիության բարձրացման, դրամական խնայողությունների պահպանումն ապահովելու, ինչպես նաև ներդրումային այլ գործառնություններ իրականացնելու նպատակով:

Նախագծով սահմանվում է, որ. «Կոոպերատիվներն իրենց կանոնադրության համապատասխան կարող են համատեղել գործունեության առանձին տեսակներ` հանդես գալով որպես բազմաձյուղ կոոպերատիվներ»:

Նախագծի 7-րդ հոդվածով սահմանվում է, որ. «Կոոպերատիվներն իրենց գործունեության համակարգման, ընդհանուր շահերի պաշտպանության, տեղեկատվական, խորհրդատվական ծառայությունների մատուցման, կոոպերատիվի անդամների և աշխատողների որակավորման բարձրացման, շուկայական վերլուծությունների իրականացման, տեխնիկական աջակցության, անդամ կոոպերատիվների տեխնիկական աջակցության, անդամ կոոպերատիվների կարողությունների հզորացման, ինչպես նաև ագրոպարենային համակարգում այլ գործունեություն առավել արդյունավետ իրագործելու նպատակով կարող են պայմանագրային հիմունքներով ստեղծել միություններ»: Նախագծի նշված հոդվածով սահմանված է նաև կոոպերատիվների միության առանձնահատկությունները, անդամության հետ կապված հարաբերությունները:

Նախագծի 8-րդ հոդվածը վերաբերում է կոոպերատիվների միությունների մասնաձյուղերին և ներկայացուցչություններին: Մասնավորապես նախագծով նշվում է, որ. «Կոոպերատիվները և միություններն իրավունք ունեն օրենքին և իրավական

այլ ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝

- մասնաճյուղ է համարվում կոոպերատիվի կամ միության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա ստորաբաժանումը, որն իրականացնում է միության կանոնադրությամբ բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչական գործառույթները.
- ներկայացուցչություն է համարվում կոոպերատիվի կամ միության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա ստորաբաժանումը, որը ներկայացնում է կոոպերատիվի կամ միության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը»:

Նախագծի «Կոոպերատիվի հիմնադրումը և անդամությունը» 2-րդ գլխի 9-րդ հոդվածը վերաբերում է կոոպերատիվի ստեղծմանը, մասնավորապես սահմանվում է, որ. «Կոոպերատիվը կարող է ստեղծվել նոր կոոպերատիվի հիմնադրման, գոյություն ունեցող կոոպերատիվների միավորման, առանձնացման միջոցով»:

Նախագծի 10-րդ հոդվածը վերաբերվում է կոոպերատիվի հիմնադրմանը, սահմանված է, որ. «Կոոպերատիվի ստեղծումը հիմնադրման միջոցով իրականացվում է ցանկություն հայտնած ֆիզիկական անձանց հիմնադիր ժողովի որոշմամբ»: Այնուհետև նախագծով սահմանվում է հիմնադրման միջոցով կոոպերատիվի ստեղծման հարաբերությունները:

Նախագծի 2-րդ գլխի առանցքային հոդվածներից է «Կոոպերատիվների կանոնադրությունը» 11-րդ հոդվածը: Նախագծով սահմանվում է, որ. «Կոոպերատիվի հիմնադիր փաստաթուղթը կոոպերատիվի կանոնադրությունն է»: Նախագիծը ամրագրում է, որ կոոպերատիվը կանոնադրությունը սահմանում է հետևյալը՝

- կոոպերատիվի անվանումը՝ լրիվ, կրճատ, ինչպես նաև ներառի <<կոոպերատիվ>> բառը.
- կոոպերատիվի գտնվելու վայրը.
- Կոոպերատիվի կապիտալի ձևավորման կարգը.
- կոոպերատիվի կառավարման մարմինների կազմավորման կարգը, կազմը և իրավասությունները, նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը.

- կոոպերատիվի անդամների իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ՝ կոոպերատիվի անդամների փայավճարների չափը, դրանք վճարելու կարգը և այդ պարտավորությունը խախտելու համար կոոպերատիվի անդամների պատասխանատվությունը.
- կոոպերատիվի անդամության հավաստման փաստաթղթի ձևի սահմանումը.
- կոոպերատիվի նոր անդամ ընդունելու կարգը.
- կոոպերատիվի մասնակցի՝ կոոպերատիվից դուրս գալու կարգը.
- կոոպերատիվի անդամի հեռացման որոշման բողոքարկման կարգը.
- կոոպերատիվի գործունեության հիմնական նպատակը (առարկա).
- կոոպերատիվի անբաժանելի և պահուստային ֆոնդերի ձևավորման ու օգտագործման կարգը.
- կոոպերատիվի շահույթի և վնասների բաշխման կարգը.
- կոոպերատիվի անդամների կողմից բողոքարկման կարգը.
- ֆինանսական տարվա սկիզբն ու ավարտը.
- կոոպերատիվի անդամների կողմից, որպես փայավճար մուծվող հողամասերի (հողաբաժինների) և այլ գույքի դրամական (արժեքային) գնահատման կարգը.
- ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը.
- կոոպերատիվի անդամակցության դիմումը մերժելու դեպքում բողոքարկման կարգը.
- կամավոր կերպով կոոպերատիվի լուծարման կարգը.
- վեճերի կարգավորման կարգը.
- աուդիտի անցկացման կարգը.
- կոոպերատիվի ոչ անդամների հետ գործունեության կարգավորման կարգը.
- օրենսգրքով, ինչպես նաև նախագծով նախատեսված այլ դրույթներ:

Նախագծի 12-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի պետական գրանցմանը**: Նախագծով սահմանվում է, որ «Կոոպերատիվը ենթակա է պետական գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն օրենքի նախագծով սահմանված կարգով»:

1 Կոոպերատիվների հետագա կայունության ապահովման երաշխիքների ստեղծման համար նախագծով կոոպերատիվների գրանցման պարտադիր պայման է հանդիսանում հետևյալ փաստաթղթերի առկայությունը՝

- կոոպերատիվի տնտեսական ծրագիրը.
- փայերի մուծման մասին անդորրագիրը.
- կոոպերատիվի հիմնադիր ժողովի արձանագրությունը:

Նախագծի 13-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի անդամներին**: Նախագծի համաձայն. «Կոոպերատիվի անդամ կարող են դառնալ 16 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև իրավաբանական անձինք, որոնք ընդունում են տվյալ կոոպերատիվի կանոնադրությունը»: Սահմանվում է, որ. «Կոոպերատիվի անդամների թիվը պետք է լինի ոչ պակաս 7 ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Կոոպերատիվի ղեկավար մարմիններում չեն կարող ընդգրկվել 18 տարին չլրացած կոոպերատիվի անդամները»:

Նախագծի տվյալ հոդվածով սահմանվում է նաև կոոպերատիվների անդամների իրավունքներն ու պարտավորությունները, մասնավորապես.

**1) «կոոպերատիվի անդամներն իրավունք ունեն»՝**

ա. մասնակցել կոոպերատիվի կառավարմանը, մասնակցել ընդհանուր ժողովին, հանդես գալ առաջարկություններով, քվեարկել, ընտրել, ընտրվել:

բ. տեղեկություններ ստանալ կոոպերատիվի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ,

գ. օգտվել կոոպերատիվի համար կազմակերպվող ուսուցումից և խորհրդատվությունից,

դ. ստանալ կոոպերատիվի գործունեությունից օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված ավելցուկը պատրոնաժի տեսքով, ինչպես նաև կոոպերատիվի ընդհանուր ժողովի կողմից սահմանվող սահմանափակ չափով դիվիդենդները,

ե. արտոնյալ պայմաններով ձեռք բերել ապրանքներ և օգտվել կոոպերատիվի կողմից մատուցվող ծառայություններից,

զ. անկախ մյուս անդամների ցանկությունից, իրենց հայեցողությամբ, դուրս գալ կոոպերատիվի անդամակցությունից,

է. օտարել կոոպերատիվի մեկ կամ մի քանի անդամներին կամ երրորդ անձանց իր փայր,

ը. կոոպերատիվի լուծարման դեպքում ստանալ ներդրված փայի անվանական արժեքը և կոոպերատիվի մնացորդային արժեքի իր բաժինը (բացի անբաժանելի ֆոնդից),

թ. կոոպերատիվից դուրս գալու դեպքում ստանալ ներդրված փայի անվանական արժեքը,

ժ. կոոպերատիվի ընտրված ղեկավարներից ստանալ տեղեկատվություն կոոպերատիվի ֆինանսական դրության վերաբերյալ,

ժա. լրացուցիչ պահանջել աուդիտ,

ժբ. օգտվել օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

## **2) կոոպերատիվի անդամների պարտականությունները՝**

ա. կոոպերատիվների ֆինանսական դրությունը բարելավելու կամ վարկունակությունը բարձրացնելու համար ժամանակին մուծել կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված կարգով և չափերով անդամակցության փայավճարները և կատարել այլ վճարումները,

բ. կատարել կոոպերատիվի ընդհանուր ժողովի որոշումները,

գ. խուսափել այնպիսի գործառույթներից, որոնք վնաս են հասցնում կոոպերատիվի նպատակներին,

դ. չհրապարակել կոոպերատիվի գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ. բացի օրենքով նախատեսված դեպքերի,

ե. կոոպերատիվի կորուստների համար անդամները պատասխանատու են միայն իրենց փայով,



զ. կրել օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

3) կոոպերատիվի անդամ հանդիսացող և կոոպերատիվում աշխատանքային պայմանագրով աշխատող անդամների սահմանափակումները՝

ա. չեն կարող ընտրվել կոոպերատիվի կառավարման մարմիններում,

բ. չեն մասնակցում ընդհանուր ժողովում քվեարկությանը»:

Նախագծի 14-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվում անդամագրվելու** հարաբերություններին: Նախագծով սահմանվում է, որ. «Կոոպերատիվի պետական գրանցումից հետո կոոպերատիվում անդամագրվելու (լիիրավ անդամ դառնալու) ցանկություն ունեցող քաղաքացիները կամ իրավաբանական անձինք գրավոր դիմումը ներկայացնում են կոոպերատիվի վարչությանը, իսկ այն կոոպերատիվներում, որոնք չեն ձևավորում վարչություն՝ կոոպերատիվի նախագահին: Կոոպերատիվի վարչությունը (նախագահը) մեկ ամսվա ընթացքում քննության է առնում ստացված դիմումը և որոշում է ընդունում կոոպերատիվում նոր անդամ ընդգրկելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ: Կոոպերատիվի վարչության (նախագահի) որոշումը (դրական կամ բացասական) ենթակա է հաստատման կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի կողմից»: Նախագիծը ամրագրում է, որ. «Կոոպերատիվի անդամության պայմանները և դիմումների գնահատման ընթացակարգը սահմանվում է կանոնադրությամբ»:

Նախագծի 15-րդ հոդվածը վերաբերում է կոոպերատիվի անդամության դադարեցմանը և փայի անցմանը: Ըստ նախագծի. «Կոոպերատիվին կոոպերատիվի անդամի անդամության դադարման հիմքերն են՝

- 1) կամավոր անդամությունից դուրս գալը.
- 2) կոոպերատիվից հեռացումը.
- 3) փայի հանձնումը կամ օտարումը.
- 4) կոոպերատիվի անդամ հանդիսացող իրավաբանական անձի լուծարումը»:

Նախագծով սահմանված է նաև կոոպերատիվի անդամի անդամակցության այլ պայմաններ:

Նախագծի «Կոոպերատիվի կառավարումը» վերնագրով 3-րդ գլխի 16-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի կառավարման մարմինների կառուցվածքին:**

Նախագծի համաձայն. «Կոոպերատիվի կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է, որը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Կոոպերատիվի անդամներն իրավունք ունեն ներկա գտնվել ընդհանուր ժողովին, մասնակցել օրակարգի հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումների ընդունմանը: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ընդհանուր ժողովում ունի մեկ ձայնի իրավունք»:

Նախագծով սահմանվում է, որ հիսունից ավելի անդամ ունեցող կոոպերատիվում կարող է ստեղծվել դիտորդ խորհուրդ, որը հսկողություն է իրականացնում կոոպերատիվի գործադիր մարմինների գործունեության նկատմամբ: Դիտորդ խորհրդի անդամներն իրավունք չունեն գործել կոոպերատիվի անունից: Նախագծով տրվում է դիտորդ խորհրդի գործունեության այլ պայմաններ:

Նախագծի 17-րդ հոդվածը վերաբերում է **ընդհանուր ժողովի իրավասություններին:**

Նախագծով սահմանվում է, որ. «կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- 1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
- 2) դիտորդ խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև կոոպերատիվի գործադիր մարմինների կազմավորումն ու նրանց լիազորությունների դադարեցումը, եթե կոոպերատիվի կանոնադրությամբ այդ իրավունքը չի տրվել դիտորդ խորհրդին.
- 3) կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

- 4) կոոպերատիվի տարեկան հաշվետվության և հաշվապահական հաշվեկշռի հաստատումն ու վնասների բաշխումը.
- 5) կոոպերատիվի ավելցուկի կոոպերատիվի անդամների միջև բաշխելու մասին որոշման ընդունումը.
- 6) կոոպերատիվի զարգացման ծրագրերի հաստատումն ու կոոպերատիվի ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի ընդունումը (հաստատումը).
- 7) կոոպերատիվի անդամների կողմից փայերի, ինչպես նաև այլ վճարումների չափերի, ժամկետների և կարգի մասին որոշման ընդունումը.
- 8) անբաժանելի և պահուստային ֆոնդերի ձևավորման պայմանների, չափերի, դրանց օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը.
- 9) մասնաձյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումն ու լուծարումը.
- 10) կոոպերատիվում կոոպերատիվի անդամների անդամագրումը և հեռացումը.
- 11) վարչության անդամների և (կամ) կոոպերատիվի նախագահի աշխատանքի վարձատրության պայմանների, ինչպես նաև դիտորդ խորհրդի ծախսերի փոխհատուցման մասին որոշման ընդունումը.
- 12) վարչության անդամներին և (կամ) վարչության նախագահին, դիտորդ խորհրդի, վերստուգող հանձնաժողովի անդամներին պատասխանատվության ենթարկելը.
- 13) կոոպերատիվների՝ միությունում ընդգրկելը կամ միությունից դուրս գալու մասին որոշման ընդունումը.
- 14) կոոպերատիվի գույքի օտարմանն առնչվող հարցերի մասին որոշման ընդունումը.
- 15) կոոպերատիվի աուդիտի իրականացման մասին որոշման ընդունումը.
- 16) կոոպերատիվի վերակազմակերպման և լուծարման մասին որոշման հաստատումը, ինչպես նաև լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը.

- 17) կոոպերատիվի անդամներին վարկերի (փոխառությունների) տրամադրման պայմանների և կարգի մասին որոշման ընդունումը.
- 18) կոոպերատիվից կոոպերատիվի անդամների դուրս գալու դեպքում վերադարձվող փայի չափի և ձևի սահմանումը.
- 19) սույն օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը և հարցերի լուծումը»:

Տվյալ հոդվածը ներառում է նաև ընդհանուր ժողովի հետ կապված այլ հարաբերություններ:

Նախագծի 18-րդ հոդվածը, որը վերաբերում է կոոպերատիվի հերթական ընդհանուր ժողովին, սահմանում է. «Հերթական ընդհանուր ժողովն անց է կացվում կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է գործադիր մարմնի կողմից»:

Օրենքի նախագծի 19րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի արտահերթ ընդհանուր ժողովին**: Նախագիծը սահմանում է, որ. «Արտահերթ ընդհանուր ժողովն անց է կացվում կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված դեպքերում. ներառյալ այն բոլոր դեպքերը, երբ դա անհրաժեշտ է կոոպերատիվի և նրա անդամների շահերի պաշտպանության համար»:

Նախագծի 20-րդ հոդվածը վերաբերում է **ընդհանուր ժողովի գումարման կարգին**: Նախագծի համաձայն. «Առաջին ընդհանուր ժողովը գումարվում է ոչ ուշ, քան կոոպերատիվի պետական գրանցմանը հաջորդող երկու ամսվա ընթացքում»:

Նախագիծը սահմանում է, որ. «Ընդհանուր ժողով գումարող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ոչ ուշ քան քսան օր առաջ այդ մասին ծանուցել կոոպերատիվի անդամներին՝ պատվիրված նամակներ ուղարկելու կամ անձամբ ծանուցելու միջոցով, պայմանով, որ կոոպերատիվի անդամները ծանուցված լինեն ոչ ուշ քան ժողովի գումարման օրվանից 5 օր առաջ»: Ըստ նախագծի. «Ընդհանուր ժողովի գումարման պարտականություններն իրականացնում է կոոպերատիվի վարչությունը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ կոոպերատիվի նախագահը»:

Նախագիծը սահմանում է նաև, որ. «Կոոպերատիվի անդամների առնվազն 10 տոկոսի, կամ դիտորդ խորհրդի, կամ վերստուգիչ հանձնաժողովի պահանջով գումարվում է ընդհանուր ժողովի արտահերթ նիստ: Եթե կոոպերատիվի վարչությունը (կոոպերատիվի նախագահը) չի կատարում իր պարտականությունները սույն մասում նշված պահանջով արտահերթ նիստ հրավիրելու ուղղությամբ, այդ պարտականությունները ստանձնում է դիտորդ խորհուրդը, իսկ վերջինիս բացակայության կամ այդ պարտականությունն իրականացնելու անհնարինության դեպքում՝ կոոպերատիվի անդամները ձևավորում են արտահերթ ժողովի հրավիրման նախաձեռնող խումբ»:

Նախագծի 21-րդ հոդվածը վերաբերվում է **ընդհանուր ժողովի անցկացման և որոշումների ընդունման կարգին**: Նախագիծը ամրագրում է, որ. «Ընդհանուր ժողովն անցկացվում է սույն օրենքով, կոոպերատիվի կանոնադրությամբ և ներքին փաստաթղթերով սահմանված կարգով: Սույն օրենքով, կոոպերատիվի կանոնադրությամբ և ներքին փաստաթղթերով չկանոնակարգված մասով ընդհանուր ժողովի անցկացման կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի որոշմամբ»:

Օրենքի նախագծի 22-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի գործադիր մարմնին**: Նախագծի համաձայն. «Կոոպերատիվի գործադիր մարմիններն են նրա վարչությունը և (կամ) նախագահը: Մինչև 10 անդամ ունեցող կոոպերատիվներում, կոոպերատիվի կանոնադրությամբ, կարող է նախատեսվել միայն կոոպերատիվի նախագահի և տեղակալի ընտրությունը»: Նախագիծը սահմանում է, որ «Կոոպերատիվի նախագահը և վարչության անդամները կոոպերատիվի ընդհանուր ժողովում ընտրվում են մինչև 5 տարի ժամկետով, եթե այլ ժամկետ նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ՝

- կոոպերատիվի նախագահ և կոոպերատիվի վարչության անդամներ կարող են ընտրվել միայն 20 տարին լրացած կոոպերատիվի անդամները.
- կոոպերատիվի վարչությունը գլխավորվում է կոոպերատիվի նախագահի կողմից»:

Նախագծի համաձայն «Կոոպերատիվի գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում՝

- 1) կոոպերատիվի գործունեության հիմնական ուղղությունների (գերակայությունների) որոշումը.
- 2) ընդհանուր ժողովների գումարումը և օրակարգի հաստատումը.
- 3) կոոպերատիվի վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցման վճարման կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.
- 4) կոոպերատիվի աուդիտն իրականացնող անձի (անձանց) վճարման չափի սահմանումը.
- 5) առանց լիազորագրի կոոպերատիվի անունից գործելը, այդ թվում՝ նրա շահերը ներկայացնելը և գործարքներ կնքելը.
- 6) լիազորագրեր տալը՝ կոոպերատիվի անունից ներկայացուցչության իրավունք ստանալու համար, այդ թվում՝ վերալիազորագրման իրավունքով լիազորագրեր.
- 7) հրամաններ արձակելը՝ կոոպերատիվի աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, խրախուսման միջոցներ կիրառելը և կարգապահական տույժեր նշանակելը.
- 8) կոոպերատիվում նոր անդամներ անդամագրելու կամ կոոպերատիվից դուրս գալու մասին ստացված դիմումների, ինչպես նաև կոոպերատիվի անդամներին կոոպերատիվից հեռացնելու հարցերի նախնական քննարկումը.
- 9) դիտորդ խորհրդի հետ համատեղ լրացուցիչ փայերի (փայավճարների), շահութաբաժնի և այլ վճարումների չափերի, կոոպերատիվների անդամներին վարկերի տրամադրման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.
- 10) դիտորդ խորհրդի հետ համատեղ աուդիտորական եզրակացությունների (ստուգումների արդյունքների) քննարկումը և բացահայտված խախտումների (թերացումների) վերացման ուղղությամբ միջոցառումների իրագործումը.
- 11) ոչ դրամական փայերի (հողաբաժիններ, գույք և այլն) դրամական (արժեքային) արտահայտությամբ գնահատումը.

12) ընդհանուր ժողովի իրավասությանը չվերապահված գործարքների (ոչ խոշոր չափերի գործարքների) կնքումը՝ կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանված կարգով.

13) սույն օրենքով կամ կոոպերատիվի կանոնադրությամբ վերապահված այլ իրավասությունների իրականացումը»:

Նախագծի 23-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի դիտորդ խորհրդին**: Նախագծի համաձայն. «Կոոպերատիվի դիտորդ խորհրդում կարող է ընտրվել 20 տարին լրացած կոոպերատիվի անդամը: Դիտորդ խորհուրդը կարող է ստեղծվել հիսունից ավելի անդամ ունեցող կոոպերատիվներում և կազմված է ոչ պակաս քան երեք անձից, որոնք ընտրվում են կոոպերատիվի ընդհանուր ժողովում»:

Օրենքի նախագծի համաձայն. «Դիտորդ խորհուրդը՝

- 1) իրականացնում է հսկողություն կոոպերատիվի վարչության, կոոպերատիվի նախագահի գործունեության նկատմամբ, իրավասու է ստուգել կոոպերատիվի դրամարկղը, արժեթղթերի և առևտրային փաստաթղթերի առկայությունը, անցկացնել գույքագրում և իրականացնել կոոպերատիվի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հսկողությանն առնչվող այլ գործառույթներ.
- 2) պարտադիր անցկացնում է կոոպերատիվի հաշվապահական հաշվեկշռի, տարեկան հաշվետվության արժանահավատության ստուգումներ և արդյունքների մասին ընդհանուր ժողովին ներկայացնում եզրակացություններ.
- 3) տալիս է եզրակացություններ կոոպերատիվում անդամագրվելու կամ կոոպերատիվից դուրս գալու մասին ստացված դիմումների վերաբերյալ.
- 4) կարող է նախաձեռնել ընդհանուր ժողովի գումարումը.
- 5) առաջարկություն է ներկայացնում կոոպերատիվի գործունեության առդիտորական ստուգում անցկացնելու վերաբերյալ.
- 6) իրականացնում է կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ»:

Նախագծի 24-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի վերստուգող հանձնաժողովին**: Նախագծի համաձայն. «Վերստուգող հանձնաժողովը կարող է ստեղծվել քսանհինգից ավելի անդամ ունեցող կոոպերատիվներում և կազմված է ոչ պակաս քան երկու անձից, որոնք ընտրվում են կոոպերատիվի ընդհանուր ժողովում: Մինչև 25 անդամ ունեցող կոոպերատիվներում, կոոպերատիվի կանոնադրությամբ կարող է նախատեսվել միայն վերստուգողի ընտրությունը»:

Նախագծով սահմանվում է, որ. «Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը)՝

1) հսկողություն է իրականացնում կոոպերատիվի ֆինանսական գործունեության նկատմամբ.

2) ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի կամ կոոպերատիվի անդամների ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսի պահանջով, ինչպես նաև իր նախաձեռնությամբ, վերլուծում է ֆինանսական տարվա արդյունքները, կոոպերատիվի ֆինանսական վիճակը, բացահայտում ֆինանսական գործունեության խախտումները, և առաջարկություններ ներկայացնում դրանց վերացման վերաբերյալ.

3) իրականացնում է սույն օրենքին համապատասխան՝ կոոպերատիվի կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ գործառնություններ»:

Նախագիծը ամրագրում է, որ. «Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի)՝ կոոպերատիվի ֆինանսական գործունեության ստուգումների (ուսումնասիրությունների) արդյունքները և դրանց հիման վրա նախապատրաստված առաջարկությունները, եզրահանգումները, վերլուծությունները կոոպերատիվի կողմից սահմանված կարգով և ժամկետներում քննարկվում և ընթացք են տրվում կոոպերատիվի ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի, կամ կոոպերատիվի գործադիր մարմնի կողմից»:

Նախագծի 4-րդ գլուխը, վերաբերվում է **կոոպերատիվի գույքին**: Տվյալ գլխի 25-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի գույքի ձևավորման աղբյուրներին**: Նախագիծը սահմանում է, որ. «Կոոպերատիվի գույքի ձևավորման աղբյուր են հանդիսանում ինչպես սեփական, այնպես էլ փոխառու միջոցները: Փոխառու միջոցների մասնաբաժինը կոոպերատիվի գույքի կազմում սահմանվում է



կոռպերատիվի կանոնադրությամբ: Կոռպերատիվի սեփական միջոցները հիմնականում ձևավորվում են փայերի մուծումներից (փայավճարներից), անդամներին լրացուցիչ փայերի վաճառքից, կոռպերատիվի գործունեությունից ստացված ադբյուրներից, ինչպես նաև արժեթղթերից, բանկերում ներդրված ավանդներից»:

Ըստ նախագծի. «Կոռպերատիվը հանդիսանում է կոռպերատիվի անդամների կողմից անդամագրվելու նպատակով մուծված փայերի (փայավճարների) սեփականատերը»:

Նախագծով տրվել է նաև կոռպերատիվի գույքի ձևավորման այլ հարաբերություններ:

Նախագծի 26-րդ հոդվածը վերաբերում է **փայերի մուծմանը**: Նախագիծը սահմանում է, որ. «Մուծվող փայերը (պարտադիր և լրացուցիչ) հաշվառվում են դրամական (արժեքային) արտահայտությամբ: Եթե փայը կամ փայի որոշ մասը մուծվել է հողաբաժնի, կատարված աշխատանքի կամ այլ գույքի կամ գույքային իրավունքի տեսքով, կատարվում է դրանց դրամական (արժեքային) գնահատումը, որը հաստատվում է ընդհանուր ժողովի որոշմամբ»: Նախագիծը սահմանում է նաև փայերի մուծման այլ հարաբերություններ:

Նախագծի կարևոր հոդվածներից է **կոռպերատիվի ավելցուկի և շահույթի բաշխումը**: Նախագծով սահմանվում է. «Կոռպերատիվի հաշվապահական հաշվեկշռով հաշվարկված ավելցուկի և շահույթի բաշխումն օրենքով սահմանված կարգով իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- 1) անբաժանելի և պահուստային ֆոնդերի համալրում.
- 2) ավելցուկի վճարում կոռպերատիվի անդամներին.
- 3) սահմանափակ մոտեցմամբ շահույթի բաշխում կոռպերատիվի անդամներին.
- 4) այլ վճարումներ, որոնք նախատեսված են կոռպերատիվի կանոնադրությամբ»:

Նախագիծը ամրագրում է, որ. «Կոռպերատիվի ոչ անդամների հետ ունեցած գործարքներից ստացվող շահույթն ուղղվում է կոռպերատիվի անբաժանելի և պահուստային ֆոնդերին, իսկ կոռպերատիվի անդամների հետ գործարքներից ստացվող ավելցուկի մի մասը բաշխվում է կոռպերատիվի անդամներին պատրո-

նաժային փոխհատուցմամբ՝ իրենց մասնակցության համամասնությամբ», ինչպես նաև. «Կոոպերատիվի անդամների հետ ունեցած գործարքներից ստացված ավելցուկի կոոպերատիվի անդամներին ուղղման և այլ ֆոնդերի համալրման համամասնությունը սահմանվում է կոոպերատիվի կանոնադրությամբ»:

Նախագծի 28-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի և կոոպերատիվի անդամների գույքային պատասխանատվությունը**: Նախագծի համաձայն. «Կոոպերատիվը պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների համար կոոպերատիվի սեփականություն հանդիսացող ամբողջ գույքով և պատասխանատվություն չի կրում կոոպերատիվի անդամների պարտավորությունների համար»:

Նախագծի 5-րդ գլուխը նվիրված է **կոոպերատիվի վերակազմակերպմանը և լուծարմանը**: Նախագծի 29-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի վերակազմավորմանը**, որի համաձայն. «Կոոպերատիվի վերակազմակերպումը իրականացվում է կոոպերատիվի օրենքով սահմանված կարգով՝ լուծարումից հետո»:

Նախագծի 30-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի աուդիտի իրականացմանը**: Նախագծով սահմանվում է, որ. «Կոոպերատիվների աուդիտի իրականացումը կրում է խորհրդատվական բնույթ, նպատակ ունի գնահատելու կոոպերատիվների համար սահմանված կանոններին համապատասխանությունը և անհամապատասխանության բացահայտման դեպքում դրանց վերացմանն ուղղված աշխատանքի ուղղորդումը: Կոոպերատիվների աուդիտը տարանջատված է պետական գործառույթներից և իրականացվում է կոոպերատիվների միությունների կողմից»:

Նախագծի 31-րդ հոդվածը վերաբերում է **կոոպերատիվի լուծարմանը**: Նախագիծը սահմանում է, որ. «Լուծարումը կոոպերատիվի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց հանձնելու»:

Կոոպերատիվը կարող է լուծարվել՝

- 1) ընդհանուր ժողովի որոշմամբ.

2) դատարանի կողմից կոռուպցիայի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում.

3) երբ կոռուպցիայի անդամների թիվը ավելի քիչ է քան օրենքով սահմանված նվազագույն թիվը.

4) կոռուպցիայի սնանկ ճանաչվելու դեպքում.

5) կոռուպցիայի 2 տարուց ավել ժամանակահատվածում անգործության մատնվելու դեպքում.

6) օրենքով սահմանված այլ հիմքերով»:

Նախագծով սահմանվում է, որ. «Կոռուպցիայի ընդհանուր ժողովը լուծարման գործընթացն իրականացնելու նպատակով կոռուպցիայի կանոնադրությանը համապատասխան հաստատում է ամփոփիչ հաշվեկշիռը, ընդունում է որոշումներ՝ լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի կոռուպցիայի անդամների միջև բաշխման վերաբերյալ»:

Նախագծի 32-րդ հոդվածը սահմանում է կոռուպցիայի **լուծարման կարգը**:

Մասնավորապես. «Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում կոռուպցիայի կառավարման լիազորությունները: Լուծարվող կոռուպցիայի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը»:  
Նախագիծը սահմանում է նաև կոռուպցիայի **լուծարման այլ հարաբերությունները**:

Նախագծի 6-րդ գլուխը վերաբերում է **գյուղատնտեսության կոռուպցիայի բնագավառում պետական աջակցությանը**:

Նախագծի 33-րդ հոդվածը առնչվում է **գյուղատնտեսական կոռուպցիայի և գյուղատնտեսական կոռուպցիայի միության ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններին**:  
Նախագծով սահմանվում է, որ. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է գյուղատնտեսական կոռուպցիայի և դրանց միությունների իրավունքները և պաշտպանում նրանց օրինական շահերը: Պետությունն աջակցում է գյուղատնտեսական կոռուպցիայի զարգացմանը և տնտեսական

ինքնուրույնության ամրապնդմանը: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է գյուղատնտեսական կոոպերատիվի և դրանց միությունների իրավունքները և պաշտպանում նրանց օրինական շահերը: Պետությունն աջակցում է գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացմանը և տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանը»:

Նախագծի համաձայն. «Գյուղատնտեսական կոոպերատիվն իր գործունեության մեջ անկախ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպություններից: Արգելվում է գյուղատնտեսական կոոպերատիվի գործունեությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների անօրինական միջամտության հետևանքով գյուղատնտեսական կոոպերատիվին հասցված նյութական վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները գյուղատնտեսական կոոպերատիվի պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, իսկ վերջիններս պատասխանատվություն չեն կրում այդ մարմինների պարտավորությունների համար»:

Նախագծի 34-րդ հոդվածը վերաբերում է **գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում պետական աջակցության ուղղություններին**: Նախագիծը սահմանում է, որ. «Պետությունը սուբսիդավորման, նպատակային ծրագրերի իրագործման, բարենպաստ իրավաօրենսդրական դաշտի ձևավորման միջոցով խթանում է ագրոպարենային համակարգում կոոպերատիվների ստեղծումը, վերջինների գիտական, կադրային, տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը»:

Նախագծի համաձայն գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝

1) արդիական տեխնոլոգիաների ներդրման և տեխնիկական հազեցվածության աջակցությունը.

2) պետական ծրագրերում և պետական գնումներում որպես գործընկեր կոոպերատիվների առաջնահերթության ապահովումը.

3) կոոպերատիվների և գյուղատնտեսական մթերքի (հումքի) արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների (գյուղացիական տնտեսությունների) հարկման և պետական աջակցության այլ պայմանների համահավասարեցումը.

4) գյուղատնտեսական հումք վերամշակող, գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսներ մատակարարող և արտադրանքը իրացնող ընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատման աջակցությունը.

5) արտահանման ներուժ ունեցող կոոպերատիվների արտադրանքի մրցունակությունն արտերկրներում բարձրացնելու նպատակով՝ բիզնես-ֆորումների, ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպմանն աջակցությունը.

6) խորհրդատվության, ուսուցման և արժանահավատ տեղեկատվության տրամադրման աջակցությունը.

7) ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանությունը.

8) գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանն աջակցությունը.

9) գյուղատնտեսական վարկերի մատչելիության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացումը.

10) սննդամթերքի անվտանգության ապահովման և օրգանական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական ծրագրերի իրականացումը.

11) հողերի բարելավման, ռոտզման, առաջնային սերմնաբուծության, բույսերի պաշտպանության, տոհմաբուծության և անասնաբուծության բնագավառներում միջոցառումների ֆինանսավորումը.

12) կոոպերատիվների կարևորության ընկալմանն ուղղված ծրագրերի իրականացում.

13) կրթության, վիճակագրության, հետազոտությունների գործընթացում կոռուպցիայի վերացման և կոռուպցիայի կանխարգելման արդյունքները առաջնահերթ ներառում.

14) սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված ուղղություններով աջակցությունը:

Նախագծի 7-րդ գլուխը վերաբերում է <<Եզրափակիչ դրույթներին>>, որտեղ 35-րդ և 36-րդ հոդվածներով համապատասխանաբար սահմանվում է օրենքի պահանջների խախտման դեպքում պատասխանատվությունը և օրենքի ուժի մեջ մտնելը:

**4. Վերը նշված նախագծերի ընդունումից (հաստատումից) հետո ակնկալվող արդյունքները հետևյալն են՝**

1) գյուղատնտեսական կոռուպցիայի վերացման և կոռուպցիայի կանխարգելման արդյունքները կկարգավորվեն մեկ միասնական օրենքով.

2) գյուղատնտեսական կոռուպցիայի վերացման և կոռուպցիայի կանխարգելման արդյունքները համահունչ կլինի միջազգային մի շարք փաստաթղթերին, այդ թվում՝ Կոռուպցիայի վերացման միջազգային դաշնության «Կոռուպցիայի վերացման հռչակագրին», Աշխատանքի միջազգային կազմակերպության 2002թ. ընդունած «Կոռուպցիայի վերացման» (թիվ 193) առաջարկության դրույթներին, և այլն.

3) հստակ կսահմանվեն գյուղատնտեսական կոռուպցիայի զարգացման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները.

4) կխթանվի գյուղատնտեսական կոռուպցիայի ձևավորումը.

5) կբարձրանա գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը և ոլորտում տնտեսավարողների մրցունակությունը.

6) կընդլայնվեն գործող կոռուպցիայի վերացման կարողությունները.

7) կոռուպցիայի վերացման և կոռուպցիայի կանխարգելման արդյունքները կնպաստի գյուղական համայնքների զարգացմանը.

8) կոռուպցիայի վերացման և կոռուպցիայի կանխարգելման արդյունքները կբարձրացնի գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը, կավելանան գյուղատնտեսական մթերքների և դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ծավալները, որի արդյունքում կավելանա

բնակչության եկամուտները և կբարձրանա երկրի պարենային անվտանգության մակարդակը.

9) պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործման համար.

10) գյուղացիական կոոպերատիվների միջոցով հեշտությամբ կլուծվեն գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների հարցերը, արտադրանքի իրացումը, արտահանումը, արտադրության նախընտրելի մասնագիտացումը, նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրության վերազինման խնդիրները: